

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴ ԲԴՈՅԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԵՏՔԵՐ
ՀԱՅԵՐԻ ՄԵԶ

Ա. ԳԱՐՈՒՆ

Հայերի նախնիները, որոնք կյանքի են կոչվել պատմական Հայաստանի տեղիտորիայում, ունեցել են գարնան պաշտամունքը, որի համար վկայություններ են հանդիսանում հնագիտական ու ազգագրական հարուստ նյութերը և հայկական ու օտար գրական աղբյուրները։ Հայաստանի դաժան ձմռան պայմաններում կազմավորված այդ պաշտամունքը խոր հնություն ունի։ Ինչպես երեսում է տվյալներից, Հայաստանի բնիկների աշխարհը մբռնման համաձայն ձմեռը մարմնավորված է մի շար ուժի մեջ։ Դա նույն չարն է, ինչ՝ գիշերը կամ խավարն արևի հանդեպ։ Բնությունը, հանձին ձմռան ու գարնան, շար ու բարի ուժերի կատաղի գոտեմարտ է պատկերացվել։ Այդ ուժերը հոմանիշ են մարդկային երևակայության մեջ այն դյուցազուններին ու հերոսներին, որոնք իրենց հակամարտության մեջ փոխնիփոխ տապալվում և փոխնիփոխ հաղթող են հանդիսանում։ Բայց դրանք հավետ մեռնող ուժեր չեն։ Այդ ընկնող ուժերը նախնական առումով, ժամանակի ընթացքում վերստին պետք է գան, պետք է նորից կործանեն իրենց կործանողներին և հաստատեն իրենց իշխանությունը։ Այստեղից էլ առաջանում են մեռնող և հարություն առնող աստվածությունների հասկացողությունները։

Հին աշխարհի մի շարք ժողովուգոների մեջ պաշտամունքի այդ ձևերը, շնորհիվ գտնված հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների տեքստերի, ավելի պարզ կերպով են ներկայացնում (հնագույն եգիպտոս, Բաբելոն և այլն)։ Դարնան կամ բնության պաշտամունքը ձևավորվել է դեռևս վայրենության վերին աստիճա-

նում և բարբարոսովթյան ստորին աստիճանում գտել իր հետագա զարգացումը:

Տոտեմական պարզ ու պրիմիտիվ շրջանից ժառանգություն մնացած իդեոլոգիական նորմերը հետագա տոհմային կարգերի պայմաններում դեռևս ապրելու հող ունեին: Տոտեմականի վրա բարդվում է նոր հասարակական պայմանների պահանջը ներկայացնող կրոնական հավատալիքը: Այս նոր սխստեմն արդեն տոտեմականից տարորշվում է այն ավելի բարձր վերացականությամբ, ուր պարզ ոգիները և հոգիները դառնում են երկրորդական կարգի «գոյեր»: Բարբարոսովթյան ստորին աստիճանում, երբ «Արևելյան մայր ցամաքը, այսպես կոչված Հին աշխարհը, ուներ ընտելացնելու համար պետքական համարյա բոլոր կենդանիները և տարածելու համար հացահատիկների պիտանի բոլոր տեսակները»,¹ և ուր դարձնը վճռական նշանակություն է ստանում դաշտամշակության համար, տարվա այդ եղանակը մարմնավորվում է առանձին աստվածության մեջ:

Բարելոնում, Եգիպտոսում և այլ երկրներում նման աստվածություններն ամենազլիավորներն են իրենց աստվածընտանիքների մեջ: Բարելոնում այդպիսին էր Թամուզ աստվածը, որի պաշտամունքը տարածված էր նաև Պաղեստինում,² իսկ Եգիպտոսում՝ Օսիրիսը, որի ժամանակները հասնում են մինչև չորրորդ հազարամյակի վերջները կամ երրորդ հազարամյակի սկզբները:³

Հայ ազգագրական նյութերը և հնագիտության տվյալները ցույց տվին, որ Արա Գեղեցկի Փունկցիաները, բացառությամբ ռազմի բնույթից, ունեցել են իրենց նախորդող ստադիան և հետագյում միայն անվանափոխության են ենթարկված: Այդ նախորդող աստվածությունը սկզբնապես եղել է իգական սեռի, որի հետագա սեռափոխման ժամանակամիջոցը նրան միաժամանակ անվանափոխման է ենթարկել:

Առաջին՝ իգական սեռի աստվածությունը նարն է իր ջրային էռությամբ, իսկ երկրորդը, որ նրա վերասերումն է՝ Ակլատիզը, բազմաթիվ անուններով:

¹ Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 33:

² Վ. Վ. Սորովեց, Հին Աշխարհի պատմություն, առաջին հատոր, Երևան, 1938, էջ 188:

³ Նույն տեղում, էջ 208:

Նարը պատենավորված է գորտի տգեղ արտաքինի մեջ, որը ինչպես հայկական բազմաթիվ հեքիաթների, նմանապես և մեր հարեան ժողովուրդների ֆոլկլորի մեջ հանրահոլակ գեղեցկուհու համբավ ունի:¹

Առայժմ նրա կերպարանափոխման այլ ձևեր մեզ հայտնի չեն:

Նար ջրային ոգի համարվածի և գորտի միջև եղած կապը հետևանք է այն բանի, որ այդ երկուսի էլ բնակավայրը ջրային-ճահճային-գետային տարածություններն են: Ուստի խոսելով նրանցից մեկի մասին, պետք է հասկանալ միաժամանակ մյուսին:

Գորտը նախապես պաշտվել է իբրև տոտեմ: Այդ պաշտամունքը ձևավորվել է գեռևս այն ժամանակ, երբ մարդկային խմբերը, նոր առաջացող տոհմերն ապրում էին զեռուններով սնունդ հայթայթելու էպոխան, բայց, ի տարբերություն մյուս կենդանիներից, նրան վերագրվող զորությունները հետագայում, այսինքն տոտեմիզմի անկումից հետո հարատեկել է, նոր ֆունկցիա վերագրելով՝ ճանապարհով: Այդ ֆունկցիաները բազմաթիվ են — մայրության և մանկության պաշտպանություն, գերդաստանի կամ տոհմի հովանավորություն, երկրագործության հովանավորություն և այլն, որոնցից առայժմ մեզ հետաքրքրողը վերջին մասն է:

Գորտի պաշտամունքը, կապված գարնան զարթոնքի և երկրագործության բերքի հետ, շարունակվում էր մինչև 20-րդ դարի սկզբները: Այդ նյութերը մեծ մասամբ գրի է առել ազգագրագետներ: Լալայանն ավելի քան քսանհինգ տարիների ընթացքում (1895—1920):

Որոշ նյութեր գրի ենք առել մեր ձեռքով վերջին ժամանակներս Հայաստանի լեռնային շրջաններում, ուր պաշտամունքն իբրև մնացուկային երևույթ, աղոտ հիշողություններ է թողել ժողովրդի մեջ:

Գորտին վերագրվող բազմաթիվ զորությունների թվում գարնան զարթոնքին վերաբերող ամբողջ հատվածը հայերի մեջ համընկնում է վրացիների, ոռաների, ուկրաինացիների, բելոռուպաների, գերմանացիների, ֆրանսիացիների, հին եգիպտացիների և այլ ժողովուրդների համանման պաշտամունքներին: Այդ ժո-

¹ Ս. Հայկունի, Ժողովրդական վեպ և հեքիաթ, էԱԺ, Բ, էջ 198—216:

զովուրդների և մեր ֆոլկլորի մեջ էլ գորտի պաշտամոնքը գրեթե նույն բովանդակությունն ունի, իբրև հասարակական զարգացման նույն աստիճանի իդեոլոգիական կառուցք:

Գորտի երկարատև քունը ուշ աշնանից մինչև վաղ գարունը, նախնական մարդու աշքում այլ բան չէր կարող թվալ, քան նրա մահը: Իսկ գարնանն, ընդհակառակը, նրա արթնությունը պարզապես հատկանշում էր հարությունը: Այս նույն բնությունն ունի տակավին մեր օրերում արջապաշտությունը բևեռամերձ շրջանների ժողովուրդների մեջ:¹

Խնչպես որ գորտի պաշտամոնքը կազմավորվել է որսորդության շրջանում, ճիշտ այդպես էլ ձևավորվել է արջի պաշտամոնքը, իբրև ուտելի տոտեմ, իբրև հիմնական կերակուր:

Բնական է, որ ձմեռային հարատև «քուն» մտնող կենդանին, ինչպես գորտն է, ձմեռվա ամիսներին աճ չունենալով, զեռուներով ապրող տոհմերի համար «մեռնում» և գարնանը «հարություն» էր առնում: Այս ոեալ հանդամանքը տոտեմական պարզ մտածողությունից հետո, մեր կարծիքով, հիմք էր ծառայում, որպեսզի հասարակության ավելի զարգացած էտապներում, ուր արդեն պատկերացումներ էին մշակվում միաստվածության մասին, առաջանար մեռնող և հարություն առնող աստվածությունը:

Իբրև այդ ձևի պատկերացման գերապրուկ, կարելի էր մատնանշել հետեւյալը: Ախալքալաքի գավառի Փ. Խանչալի գյուղում մի ժամանակ գարնան գալուստը կապում էին գորտերի հետ, որոնք Դիլիթ գյուղի առատաբուխ աղբյուրներից գարնանը մեծ խմբերով բարձրանում էին լեռներն ի վեր, Խանչալի լիճը հասնելու ժողովուրդը խոսակցության ժամանակ ասում էր, «գորտերն էկան, գարում է», կամ՝ «գիորի (մինչև) գորտը չը կը ոկըռա, գարուն չի քա»: Իսկ երբ աշնանը լճից գորտերը տեղափոխվում էին Դիլիթի աղբյուրները, ասում էին՝ «գորտը քընաց, ձմեռ է»:

Նախնական պատկերացմամբ մեռնող և հարություն առնող աստվածները, որոնք մեծ մասամբ կապվում էին երկրագործական պաշտամոնքի հետ, միաժամանակ հավիտենականության մարմնացումն էին: Հայաստանում դասակարգային պայմանների մեջ այդպիսի աստվածություն էր ներկայացնում Արա Գեղեցիկը, իր «Վիշապներ» կոչված արձաններով:

Այդ կոթողները տվյալ աստվածության հավիտենականու-

¹ Б. А. Васильев, Медвежий праздник. С Э, 1948, № 4, էջ 78—104:

թյունն ընդգծող վկաներ են: Եղիպատոսում հավիտենականության աստվածություններից մեկը ներկայացնող գորտի արձանը դրվում էր քաղաքի մուտքի մոտ: Նույն Հին Եղիպատոսում, հիերոգլիֆ արձանագրությունների մեջ գորտի շերեփուկները մեծ թիվ ցուց տվող նշաններ էին համարվում:

Ելնելով հայկական ժողովրդական ավանդություններից և հնագիտության տվյալներից, Արայի քարակոթողները մենք հակած ենք համարելու Հայաստանում այն բնական ցից քարերի հետնորդները, որոնք նեռլիթի մարդու աշխարհը մբռնմամբ մոտավորապես նույն նշանակությունն են ունեցել, ինչ որ առաջինները՝ ներկայի դարում: Այդպիսի քարեր շատ կան Հայկական բարձրավանդակում, թեև մեծ մասամբ այլանուն են դարձել:

Արագածի հարավային ստորոտներում, Թալինի քրդաբնակ Գյալթո գյուղից գեպի արևելք, երեք կիլոմետրի վրա, ուր Մեծ ու Փոքր Բողութլու գագաթներն են գտնվում, կա մի այդպիսի բնական ցից քար, որը նախասովետական շրջանում մուտքաման քըրդերի ու հայերի կողմից պաշտվնիս է եղել իրու գորտի արձան: Այժմ Գյալթոյում վերաբնակված կարսեցի եղդիների մեջ այդ պաշտաման ձևերը, իբրև մնացուկներ, տակալին ապրում են: Այդ քարը Գյալթոյի եղդիների կողմից անվանվում է «կաշվը բաղ'ին», որ նշանակում է «գորտի քար»=գորտաքար:

Դա մի բնական, կանգնած քար է, որը թողնում է առզնի վերջավորությունները կտրված, ետևի ոտքերի վրա կանգնած, փոքր ինչ բերանքաց ու կոացած իրական գորտի տպավորություն: Զախ գլխամասում կա մի փոքրիկ, բնական փոսիկ, որն ասես, դրված է ճիշտ աշքի տեղում: Բերանատեղի տակից սկսած, մինչև փորի կեսը, 1,3 մ. երկարությամբ տարածությունն ունի դեղնասպիտակավուն գույն, որը համապատասխանում է իրական գորտի փորի գույնին: Քարն առզնի մասով թեքված է դեպի հյուախարևելք և թվում է թե խոնարհում է Քյոռ-Օղուփի ոտքի առաջնարարությունը 2,6 մ. է, գլխամասի շրջագիծը՝ 4,6 մ., մեջքի շրջագիծը՝ 4,6 մ., հիմքի շրջագիծը՝ 3,6 մ.:

Ըստ տեղացիների պատմածի, Գորտաքարին առաջներում ուստի էին գնում թափորներով, երբ ներաշտ էր լինում: Այցելուներն իրենց հետ տանում էին բազմատեսակ զոհեր և կազմակերպում էին հասարակական հացկերուցք (=հմտ. ցասման հացը): Այդ ժամանակ հատուկ արարողությամբ (մանրամասնու-

թյումները չեն հիշվում) Գորտաքարին ջուր էին սրսկում, որպես զի նա անձրկ պարզեց: Զոհի համար այնտեղ տարված անասունները մորթում էին, իսկ աղավնիները բաց էին թողնում օդի մեջ:

Բացի անձրկ ակնկալելուց, Գորտաքարին էին այցելում լրեր կանայք՝ որդի ունենալու ակնկալությամբ, թպղի կողված հիվանդություն ունեցողները՝ երեխաների մահը դադարեցնելու ակնկալությամբ (= քրդերի մեջ թպղությունը արտահայտվում է «թեռաւ» բառով), հիվանդները՝ լավանալու, սնանկացած գյուղացիները՝ հարստանալու, սիրահարները՝ մուրազներին հասնելու ակնկալությամբ և այլն:

Պատմում են, թե մուառվման քրդերը, իսկ հետո նաև եղդիներն իրենց նպատակներին հասնելու համար Գորտաքարին այցելելիս մի-մի ճրագ լիքը ձեթ կամ նավթ էին տանում: Նրանք պարտավոր էին ճրագը վառ պահել, մինչև վառելանյութի սպառումը, և պիտի լուսացնեին քարի մոտ, առանց քնելու:

Դորտի և այս Գորտաքարի պաշտաման ձեերը գրեթե նույնն էին:

Ստադիալ առումով գորտի պաշտամունքային բնույթը անպայման նախորդում է հայերի մեջ գոյություն ունեցած մի շարք աստվածությունների, այդ թվում և՛ Արային, և՛ թե մյուս, գարնանային զարդունքը հովանավորողներին: Եվ այդ ոչ միայն իբրև մեռնող և հարություն առնող աստվածության, այլև իբրև սերընդաճի, տոհմային կարգերի, վերջինիս ծնոնդ ընտանիքի ու նահապետական գերդաստանի պահպանման շահախնդիր զորություն, որովհետև գորտը նախապես պաշտվել է իբրև տոտեմ: Մեզ մոտ նրա «Գորտաքար» արձանը, հետեապես, նրա տոտեմական իդեոլոգիայի առարկայացումն է:

Ի. Լ. Սնեգիրյովը գրում է, թե նախնադարյան կոմունիստական հասարակության պայմաններում նկարազարդ ժայռերը ներկայացնում էին «այնպիսի վայրեր, որոնց մոտ տեղի են ունեցել տոտեմական արարողություններ»:¹

Ճիշտ այս ձեկի կամ բնույթի սիմվոլիկ նշաններ ենք տեսնում պատմական Արմավիրի բլուրից հարավ, նրա ստորոտում՝ ընկած 2—3 մ. մեծության քարերի վրա, որոնք ներկայացնում են համակենտրոն շրջաններ, փոքրիկ փոսիկներ, նման մեղրա-

¹ Ի. Լ. Սնեգիրյով, Հին Աշխարհի պատմություն, առաջին հատուր, Երևան, 1938, էջ 73:

մոմի բջիջներին, մատների նման ուսուցիկ քանդակներ, լեռնանը-ման բարձունքներ և այլն, որոնց բովանդակությունն առայժմ մեզ համար անհասկանալի է:¹

Ակադ. Ն. Մառը մեր «Վիշապների» վրա ներկայացրած կենդանական պատկերները համարում էր կենդանական սիմվոլներ: Հատկապիս օքը նա համարում էր հողի գերիվատը:² Որքան, ուրեմն, տրամարանական է, գորտանուն քարը համարել գորտի տոտեմական արտահայտությունը, որը հետագայում վեր է ածվել «Վիշապների»— ձկնաքարերի:

Բնական քարերի մեջ տոտեմական անձնավորում տեսնելը, հասկանալի է, չեր կաբող ավելի ուշ շրջանում կատարվել, քան մեզալիթյան հուշարձաններն են, հետևապես և «Վիշապները»: Եվ քանի որ վիշապները բարձր դասակարգային հասարակության պայմաններում մշակված կրոնի՝ իրիդացիոն բնույթի երկրագործության բարձր կարգի աստվածությունների արձաններ են ու իրենց մեջ տոտեմական տարրեր ունեն, բնականորեն դրանք «Դորտագարի» և սրա նմանների ստադիալ զարգացումներն են: Հետևապես գորտն իրեւ նար աստվածուհուն պատենավորող տոտեմ, իրեւ մայրիշխանության հատուկ պաշտամունք, նախորդում է մեր Արա Գեղեցկին:

Դորտաստվածության կապը երկրագործության և մարդկային սերնդացի հետ— մատնանշում է Հայաստանի Պետական Պատմական թանգարանի № 1436 բրոնզե ապարանջանը, որը գտնվել է Յալթայում (Ղրիմ): Կարծում ենք, որ այս բրոնզյա ապարանջանը փոքրասիական ծագում ունի և մեր թվականությունից առաջ առաջին հաղարամյակում, երբ հունիքը տիրում էին և՝ Փոքր Ասիայի և՝ Ղրիմի ժողովուրդներին, առաջինից տեղափոխել են երկրորդի: մեջ, առեստրական ճանապարհով:

Դատելով փոքրությունից, ապարանջանը կանացի է, որի եզրերը ծալված են դրսի երեսի վրա: Սրանց զուգահեռ քանդակված են հյուսքեր և պարուրած նախշեր:

Ապարանջանի մի մասում, 5 սմ-ի վրա, միջին տարածության երկարությամբ, միմյանց դիմաց, բարձրագանդակված են երկու գորտեր՝ պարզած վերջավորություններով: Սրանց միջև էլ կա մի փոքրիկ պարուրած նախշ:

¹ Հմմտ. Ի. Ի. Մեշանինով, Հակակազսկան իերոգլիֆներ. Տարբերակ, 1932, № 3—4, стр. 51 և 55.

² Հ. Յ. Մարր և Յ. Ի. Սմիրնով—Վիշապների պատմություններ. Տարբերակ, 1932, № 1, стр. 523.

Քանդակները խորհրդանշում են հողը— հատիկները— կանացի հյուաքերը, իբրև ընդհանուր առմամբ մայրության սիմվոլ (=հատիկային հյուաքեր, որոնք նման են նաև հերահյուաքերի), պորտը՝ իբրև հավիտենականության— արգասավորության— երկրագործության աստվածություն, մեռնող և հարություն առնող աստվածություն և պարուղները՝ իբրև գորտի աստվածային հավիտենականությունը խորհրդանշող նշաններ:

Ապարանջանը, մեր կարծիքով, լինելով փոքրասիական արտադրություն, անմիջական կուլտուրական կապ ունի նախահայերի նման կուլտուրայի հետ: Այդ են վկայում 19—20-րդ դարերին պատկանող այն բազմաթիվ գորտազարդ արծաթյա ապարանջաններն ու ճարմանդները, որոնք այժմ պահպում են Պատմական թանգարանի՝ Իսիցյանի անվան Ազգագրական բաժնում: Դրանք մեծ մասամբ պատրաստվել են Հայաստանի հարավային գավառներում (Տարոն, Վասպուրական և այլն), որոնք վկայում են փոքրասիականի հետ ունեցած կապի մասին:

Երկրագործության (=այգեգործության) շահախնդիր աստվածության դեր ունենալու հետևանքով գորտը քանդակվել է նաև կավե ամանների վրա: Պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունն ու կուլտուրան» աշխատության մեջ Թոփրախ-կալեից հանված կավե կարասի եզրի վրայի եղանական կենդանու հետ մենք տեսնում ենք գորտի պատկեր, թեև հեղինակը գրում է, թե վերջինս գաղան է, եղան վրա հարձակված դիրքով:¹

Գորտի և եղան այս ձևի անդրապատկերումը ուրարտական կավե կարասի (=հավանորեն գինու ամանի) վրա, մենք վերագրում ենք այդ երկու կենդանիների երթեմնի աստվածություններ լինելուն, որոնք, ինչպես երկում է փաստական մատերիալից, կապված են եղել երկրագործության հետ: Ուրարտական պաշտամունքներում գորտը եղան հետ միասին կարող էր հանդես գալ իբրև հնագույն կրոնի համառ գերապրուկ, երբ արդեն ստեղծվել էր այդ հասարակության աստվածընտանիքը Խալդի գլխավորությամբ: Այդ նույն հնագույն կրոնի գերապրուկ պետք է համարել մինչև վերջին տասնամյակները հայերի կենցաղում և լեզվի մեջ գոյություն ունեցող մի շարք գորտանուն բառերը²:

¹ Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван 1944 г., էջ 243:

² Այսպես, օրինակ, Խարբերդում գյուղական տների գռների ամբողջ փականքը, որի մեջ մտնում է գլանը, իսկ Մըշում և Զեյթունում գրանք կոչվում են «կըսեա» (տես Գավառ. բառ. էջ 252), Արարայան դաշտում, Ապա-

թեև այդ բառերի մի մասը ուշ շրջանի պատահական զուգաղիպութուններ են և կրոնական ըմբռումներից հեռու, բայց նրանց մի զգալի մասը, մանավանդ գորտաձև զարդերն ու հմայիլները մենք առանց կասկածելու կապում ենք գորտաստվածության պաշտամունքի հետ:

Մենոնդ և հարություն առնող գարնան աստվածություն ենք համարում նար աստվածություն փոխարինող և նրա պաշտամունքի հիման վրա առաջացած Ակլատիզ կոչված խրտվիլակը: Վերջինս մեր գավառներում հայտնի էր զանազան անուններով, նույն բովանդակությամբ:

բանում, Շիրակում, Բասենում, Փամբակում և Թեորփիում՝ «լսնաձեւ կեռ երկաթ» մեջտեղից ծակած, որը ամրացնում են ջաղացի լիթոնի կամ հլոնի վրա և ջաղացի ցցի ծայրը գնում յուր մեջ, որպեսզի այս և այն հողմը շշարժի (Ամատունի, Բառ ու բան, Էջ 150), Խարբերդում այն հաշվեփայտը, որի վրա գծեր քաշելով հաշվի էին պահում (Գավ. բառ. 252), Վանում՝ «գորակինեա», «գորանիկ», երկու քիլ երկարությամբ և չորս մատ հաստությամբ տախտակ մըն է, երկայնության միջն կես բթաչափ լայնությամբ փորփած ճեղքածքի պես, որ կանցնեն ու կը հաստատեն ջաղացքին երկաթե ցիցին վրա, որպեսզի գունաը անոր վրա նստելով՝ վար չիչնա» (Գավառ. բառ. Էջ 252), Սերաստիայում՝ գորտնակի, դուան մոտի այն փայտը, որի մեջ մըտնում է կողպեքը (Գավ. բառ. 252), Ապարանում՝ գորտն/տուն, գութանին լծված եղների վեցերորդ լուծը (Գավ. բառ. 252), նույն Ապարանում՝ գորտնիոր, գորտնտունը վարող հոտազը (Գավ. բառ. Էջ 253), Բուլանըխում՝ գորտնբուրդ, Ախալքալաքը և Ախալցխայում՝ գորտնխալի, Մըշում՝ գորտնփրփուր, որոնք նշանակում են ճահճճների և դանդաղահոս ջրերի մեջ առաջացող միարջիջ մամոււներ (Բենսե, Բուլանըխ, Աչ, Յ, Էջ 20), Կեսարիայում՝ գորտն/բուրդ, մի տեսակ կերակուր, որ պատրաստվում էր որթի տերեւներից, ապուխտից ու ձափարից (Գավ. բառ. 252), Մըշում՝ գորտան ծաղիկ—մի գեղեցիկ ծաղիկ է (Գավ. բառ. 252), Գնանճակում՝ գորտի, մանկական խաղ (Գավ. բառ. 252), գորտան գգաւը՝ գորտի շերեփուկները (Գավ. բառ. 252), Արարատյան զաշտում, Ախալցխայում, Շիրակում և Մըշում՝ գորտանման լուղալու ձեր (Գավ. բառ. 252, Աղ. Միլիթարյան, Փշրանքներ Շիրակի ամբարներից, Էմֆ, Ա. 277), Խարբերդում, Մըշում, Ալաշկերտում, Ապարանում, Լոռուիում, Շիրակում և Բուլանըխում՝ գորտնուկ, Մանխայում՝ գորտնցույց, Դարաբաղում՝ կեռքնուկ (թե գորտ կենդանին և թե գորտնուկ հիվանդությունը), Ճեռքի վրա եղած կոծիծներն են (Գավ. բառ. 252), գորտնուկ /իսու/ խոտի տեսակ, որով բուժում են գորտնուկը (Գավ. բառ. 252), Զենկիլերում՝ գորտան ժամ, որ նշանակում է աղմկալից տեղ (Գավ. բառ. 252), Վանում՝ «գորտան խորպած» (Գավ. բառ. 252), Բյութանիայում, Նիկոմիդիայի գավառում, գորտիկ—ձուկ, ձկան մի տեսակը, որն ստացվում է նիկիո լճից: Տեղացիների արտասանությամբ՝ «գէորտէկ-ձուկ» (Գավ. բառ. 252), գորտնակեր՝ թիֆլիսեցիք այսպիսի նախատական անունով էին կոչում ճալայեցիներին (Գավ. բառ. 252), գորտ՝ լեզվի տակի այտուց, ձիու սոտքի տակի մեջի կլոր

Այսպես. Կարնո բարբառում և խոսվածքներում՝ Ախալոճ—Ախըլոճ—Ախլոճ¹ կամ Ախըլոչ² Բասենի, Ախալքալաքի ու Ալեքպոլի առանձին խոսվածքներում՝ Ախացել և Ախելուծ,³ Բաղեշում, Երևանում, Նոր-Բայազետում, Վանում, Վասպուրականի շրջաններում, Արարատյան դաշտում, Սիսիանում, Ապարանում, Մոլշում, Խոյում, Բոլանըխում, Փամբակում և այլուր՝ Ակլատիզ կամ Աքլատիզ,⁴ Բաբերդում՝ Գոգոռող,⁵ Բյութանիա-Նիկոմիդիայում՝ Խուլումիկ, Խովուրտիք, Խովուրչիճ,⁶ Նոր-Նախիջևանում, Ղրիմում և կ. Պոլսում՝ Մոռմոռող կամ Մոռմոաս,⁷ Արարատյան դաշտի մի

մասը (Արմատական բառ. Բ., 287, Նորայր-Բյուղանդացի, Բառզիքը ի գաղղերեն լեզվե ի հայերեն. Կ. Պոլս, 1884, էջ 616), Մոկսում՝ գորտ, գղրաբի անեղի մի մասը, գորտնուկ թիթեղ, ամրացրած դրսի դռան զարկանի տակ էջմիածնի շրջանի Աղջաղալա գյուղում (իմ՝ Շիւղերություններ Արարատյան դաշտում՝ տետրս, էջ 57 և 59), գորտնուկ փայտ (նաև գորտ իրական կենդանին) Ապարանի Ղարանլուղում։ Այսպես է կոչվում երկմատնանի և մոտ 25 ոմ երկարության փայտը, որի վրա հանգչում է ջաղացի թոփը, գորտնուկ՝ Ախալքալաքի գավառի Գանձա և Ռւճմանա հայ գյուղերի գումերի սեա-յի (գուան շրջանակի) վըայի հավելված փայտը, որը սեղմում է զուռը. գորտաձև ճարմանդներ, որոնք մեծ մասամբ գործ էին ածվում կանացի արծաթյա գոտիների հետ և պատրաստվում էին արծաթից, զչխավորապես հարավային Հայաստանի նահանգներում (տես Պետ. Պատմական թանգարանի Ազգագրական բաժնի № 1127), գորտաձև կրծքի ու գլխի զարդներ, որոնք նույնպես տարածված էին Հայաստանի հարավային նահանգներում (տես Պետ. Պատմական թանգարանի Ազգագրական բաժնի № 1020, 1367, 1406), գորտաձև փայտյա հմայիլ—անառունների (եղների) համար (տես Պետ. Պատմական թանգարանի Ազգ. բաժնի № 3330-2):

1 Հ. Մալիայան, Հայ գեղջուկի ալրոմը. Ահ, Զ, 197:

2 Ամատունի, Բառ ու բան, էջ 8:

3 Ամատունի, Բառ ու բան, էջ 8, Գավ. բառ. 54, Գեղամյանց—Իմ մանկական հիշողություններից. Փորձ, Բ. տարի, Բ. 289—290, Քաջբերաւունի—Հայկական սովորություններ. Ահ, էլ-Ը, 122, Գավ. բառարան, 54:

4 Բենսե, Բուլանըի. Ահ, Զ, 64, Ամատունի—Բառու բան, թ. Գավ. բառ, 54, Ե. Լալայան—Սիսիան, Ահ, Գ, 254, Սիսն Վ. Մանուկյան—Արարատյան բարբառի ժողովրդական բառերի ցանկ, բառափնյիկ. Վաղարշապատ, 1911, էջ 5, Ե. Լալայան—Մոլշ—Տարոն. Ահ, իջ, 184, Գ. Շերենց—Վանա սազ. Բ, 1899, էջ 2—3:

5 Գավ. բառ., 54:

6 Գավ. բառ., 54, Բյուրակն, 1898, էջ 184, 379: Ակլատիզի այս անունը հմատ. ուրարտական Խւտիու աստծու հետ, որին ուրարտագետները հակված են համարելու առողջության աստված։ Սա ուրարտական պանթեոնում Խալդ Տեղուալ—Արդինի երրորդությունից հետո հիշվող աստվածն է, որին նվիրում էին երկու արջառ և չորս ոչխար:

7 Գ. Տիգրան յան, Առածք, ասացվածք և զբույցք հայոց Նոր-Նախիջևանի. Ռոստով, 1892, էջ 37, Աճառյան—Գավ. բառ., 54:

քանի տեղերում՝ Մեծ-պաս,¹ Աշտարակում՝ ռՈւտիս տատ և Մեծ պաս պապ»,² Բյութանիայում՝ «Պահք-ուտեմ»,³ Ղարաբաղում, Բորչալովի գավառում և Ղազախում՝ «Պապի պուլով»,⁴ Սասոմում՝ ֆոփիկ և այլն:

Ակլատիզը սովորական առումով իրենից ներկայացնում է մի փոքրիկ ձող, որի ստորին ծայրին ամրացնում են մի սոխ կամ մի



Նկ. 12. Ախլոն—Ակլատիզ Ախալքալաքի
Փ. Խանչալի գյուղի վարչանոտ

գետնախնձոր: Սոխի չորս կողմը հավի կամ սագի փետուրներ են խրում ճառագայթաձև: Զողի վերին ծայրին թել են կապում և կախում թոնրատան երդկի խաչքից կամ առաստաղից: Որոշ

¹ Ա. մատունի, Բառ ու բան, 8:

² Գ. Գոռշան, Հացի խնդիր, Թիֆլիս, 1880, էջ 58:

³ Գավ. բառ., 54:

⁴ Քաջը երունի, Հայկական սովորություններ, Աչ, է—լ գիրք, էջ 122. Ե. Լալայան, Բորչալովի գավառ, Աչ, Փ. գիրք, էջ 258, 223, Ամառունի—Բառ ու բան, էջ 8:

վայրերում, ինչպես, օրինակ, Ախալքալաքի և Ախալցիայի առանձին գյուղերում Ակլատիզը (Ախլոճ) հանդես է գալիս իբրև արական սեփի խրտվիլակ, զգեստավորվելով երկրագործին հատուկ զգեստներով։ Նա ծերունի է, սպիտակ ու փարթամ քեխ ու միրուքով։ Ախլոճը միոտնանի է, որի ծալրին խրվում է սոխը, թեները պարզված են, որոնցից մեկական կամ երկուական քարեր են կախվում։ Տեղ-տեղ քարերի թիվը ևս յոթն է, Քար է կախվում նաև ոտքի ծայրից։ Քարեր են կախվում նմանապես Ակլատիզի այլ վարիանտների փետուրներից¹ Բուշանըխի վարիանտում, չսոխի ևմի կողմը սուր փայտ մի կը խրեն, իբրև կտուց Աքլատիզի։² Որոշ աղբյուրներ վկայում են, թե Ակլատիզի յոթ փետուրները տարբեր գույների են լինում, ցույց տալու համար մեծ պասի տարբեր շաբաթները։ Իսկ որոշ տեղերումն էլ մեկը սպիտակ է լինում, վեցը սև,³ ուր որ բանահավաքները ճիշտ կերպով դրանք օրացույց են համարում։ Մեր գրի առած մի վարիանտում (Ախալքալաք) փետուրներից չորսը սպիտակ են, որոնք սիմվոլիկորեն ցույց են տալիս մեծ պասի առաջին չորս շաբաթները, ձմեռային պայմաններում, մեկը՝ խատուտիկ (կիսասպիտակ-կիսասև), ցույց տալու համար, ըստ երևույթին, ձմեռվա անցումը և գարնան սկիզբը, և վերջապես երկուաք՝ լրիվ սև են, որոնք հատկանշում են հաղթանակած գարունը։

Հստ ազգագրական տվյալների, Ակլատիզի քարերը երեխաներին պատժելու համար են, որոնք համարձակվում են ուտիքի արգելված կերակուրներին մերձենալու երեխաներից գաղտնի՝ մեծերը շարժման մեջ էին դնում Ակլատիզը և մի քարով խփում նրանց, — իբրև թե Ակլատիզն էր խփում։ Նրանով վախեցնում էին նաև ավելի փոքրերին, շարությունը կանխելու համար։

Մեծ պասի առաջին օրը, դեռ շուացած, երեխաներից գաղտնի մեծերն Ախալքալաքի գյուղերում կախում էին Ախլոճը թոնրատան երդիկի խաչքից կամ առաստաղից, առավոտյան հավատացնելով, թե նա ինքը եկել և կախվել է։ Տեղ-տեղ էլ հանդիսավոր ու խորհրդավոր ձեռվ, ուշ երեկոյան կանայք ախլոճն առաջ էին բերում և երեխաներին սարսափի մեջ դնում։ Բորշալուի

¹ Քաջը երռւն է, հայկական սովորություններ, էջ 122։

² Բենսե—Բուշանըխ, Աչ, Զ. Գիրք, էջ 64։

³ Գեղամյան, Իմ մանկական հիշողություններից, Փոք, Բ. տարել, № 2, էջ 290, Ե. Լալայան, Սիսիան, Աչ, գիրք Պ., էջ 254։

գալառում այդ խրտվիլակը տան պառավը երեխաներին ցուց տալիս ասում էր.—

Տատը գնաց շերեփը ձեռին,
Պապը եկավ շոմբախն ուսին։¹

Դրեթե նույնն է նաև Աշտարակի վարիանտը, ուր ատված է. «Ուսիս տատին պտի... ճանապարհ դնեն, իսկ Մեծ պաս պապին համեցեր անեն»² Ախալքալաքի Կորիս գյուղի վարիանտում (Ախալքուծ) Ակլատիզին ուղեկցում են երկու ողիներ՝ «Փախլաճօղլի» և «Քէպէպճօղլի» անոններով: Փախլաճօղլին (=բակլա մշակողի տղա) հսկում է պասը և Ակլատիզի քարերն առնում, շպրտում է պասն ուսող երեխաների վրա, իսկ Քէպէպճօղլին (=խորոված անողի որդի), ընդհակառակը, հսկում է ուսիսի վրա: Այլ կերպ ասած, մնելը պասի և մյուսը ուսիսի ներկայացուցիչն է: «Դյուլացիք... նկարագրում են այն պատերազմը, որ լինում է նրանց մեջ բարեկենդանի վերջին և ավագ շաբթի վերջին օրերում: Բարեկենդանին հաղթող հանդիսացող լինում է Փախլաճօղլին, իսկ ավագ շաբթում՝ Քէպէպճօղլին»³

Բորշալուի մի ուրիշ վարիանտում պասը ներկայանում է իբրև պապ, իսկ ուսիսը՝ տատ: Պասը (պապը) լորու սպասի մեծ շերեփով խփում է ուսիսի (տատի) գլխին և դուրս է անում տնից այն բանի համար, որ նա երեխաներին ուսիսի կերակուրներով է կերակրում և հոգին տկարացնում շաղ մարմնի մեջ: Որոշ ժամանակ անց, այսինքն պասի ելքին ուսիսն է պասին խփում մածնուռ շերեփով և վընդում, գտնելով, որ պասը երեխաներին մաշում է»⁴

Մեծ պասի վերջին օրը, երբ արդեն տնից դուրս էր նետվում Ակլատիզը, որոշ գալառներում նրա ծլած սոխը գցում էին կերակրին, զատկական կերակրին, վերագրելով նրան որոշ զորովթյուն (Սյունիք): Որոշ տեղերում էլ այն գցում էին սերմացուի մեջ, նույն զորովթյան պատճառով:

Որոշ գավառներում Ակլատիզը հալածվում էր, երբ հասնում էր դուրս հանելու ժամը: Շներջի շաբթին մնում է միմիայն մի փետուր և սոխը (որի վրա շարած են փետուրները), այդ էլ ճրա-

¹ Ե. Լալայան, Բորշալուի գավառ, ԱՀ., Ժ. դերք, էջ 258:

² Գ. Պողջան, Հայի խնդիր, 1880, էջ 58:

³ Գեղամ յան, նույն աշխ., էջ 290:

⁴ Ե. Լալայան, Բորշալուի գավառ, ԱՀ., գիրդ Ժ., էջ 223:

գալույծի երեկոյան առնում են տան երիտասարդները, տանում կալերը և դագանակների հարվածներով դես ու դեն քշելով՝ ջուրը գցում, խեղդում, «ազատվում»:¹ Այս ձեմի հալածանքը և ջուրը գցելը մենք էլ անձամբ հիշում ենք Ախալքալաքից:

Ակլատիզի մասին պատմվող ավանդությունների մեջ կարեոր է Այնթապի վարիանտը: Բանահավաքը պատմում է, թե ավագ շաբթի վերջին օրերին սովորություն կար պատվավոր կերակուր ճաճըխը (մածնախառն կերակուր) առաջին հերթին հրամցնել Խովումճիկին: Նրանք սոխի կավոտ քիթը (ըստ երևութին Խովումճիկը կավից պատրաստված քիթ էր ունենում) թաթախում էին մածնի մեջ և նետում տանիքը, հավատալով, որ Խովումճիկը թոշում է դառնում: Սոխը դառնում էր նրա մկանունքը, խոփվ՝ կմախքը և վերջին միակ փետուրը՝ մարմինը ծածկող փետուրները: Ավանդությունն ասում է, թե Խովումճիկը թոշում դառնում, սավառնում էր վերստին գալու համար:²

Այս նյութերի ամփոփ նկարագիրը մեզ հնարավորություն է ընձեռում պնդելու, որ Ակլատիզը նախարայան շրջանի Հայաստանում, Նարից հետո և Արայից առաջ եղել է սիրված ու մեծ աստվածություններից մեկը: Նա իրեն պատրիարքիսալ հասարակության հոգմոր պահանջների աստվածություն, իբրև այդ հասարակության նոր տնտեսակարգի՝ երկրագործական լայն մասշտաբի աշխատանքների ծնունդ, իրենից ներկայացնում է նար աստվածուհուն, այլ կերպ՝ մատրիարքաստական կարգերին և բարձր դասակարգային հասարակությանն ու Արային կամրջող աստվածություն: Այդ երկու պատմական հեռավոր էպոխաների արանքում, երբ դեռևս իշխում էին հայրական տոհմային կարգերը, Ակլատիզը այժմ գոյություն ունեցող իր զանազան անուններով, բայց միանույն բովանդակությամբ, հավանորեն հանդիսանում էր գյուղական համայնքների առանձին աստվածությունը: Առանձին տոհմերը կամ ցեղերն իրենց նույնանիշ աստվածություններով, հետագայում մի համախմբություն կազմելիս ստեղծում էին ընդհանուր աստվածություն:

Ելնելով Ակլատիզին ծառայող «Պաս» ու «Ռւտիս»-ների և Փախլաճօղի» ու «Թէպէպճօղի»-ների՝ իբրև մնացուկային ձեռվ ծառայողների գոյությունից, ինչպես նաև Ակլատիզը հանդիսավոր

¹ Հովհաննես Մալիսյան, հայ գեղջուկի ալբոմը, Աչ, դիրք 2, էջ 197:

² Բյուբակն, 1898, էջ 379:

ձեռվ առաջ բերող պառավ կանանց կամ աղջիկների ծառայությունից, մենք հակված ենք գտնելու, որ Ակլատիզն իբրև գարնան զարթոնքի աստվածություն, ունեցել է իրեն հսկող և ծառայող անձնակազմ:

Հստ երեւլթին Ակլատիզը հանդիսանում էր այնպիսի աստվածություն, որին պատկանում էին պետական ունեցվածքները, ինչպես մենք տեսնում ենք հնագույն Բաբելոնում:¹ Մենք այդ սեփականատիրական, բայց տակավին պրիմիտիվ ստրկատիրական կարգերի ժամանակներին ենք վերագրում, օրինակ, Ակլատիզի կողմից ուտիքի և պահքի կերակուրներին (մթերքներին) հըսկելու հատկությունը, որը քրիստոնեության պայմաններում միանգամայն այլ գունավորում է ստացել:

Քանի որ «Պատմական պետությունների մեծամասնության մեջ քաղաքացիներին տրամադրվող փրալզոմքները համաշափում են նրանց գույքային դրության մեջ, և դրանով ուղղակի հայտարարվում է, որ պետությունը ունեոր դասակարգի մի կազմակերպություն՝՝ նրան չունեոր դասակարգից պաշտպանելու համար»,² անկասկած, հասարակական այդպիսի կառուցվածքի մեջ կրոնական ըմբռումները պետք է արտահայտեն պետական շահերը: Պետական պանթեոնը զիսավորող աստվածությունը տվյալ պետության մեջ նրա գուգահեռն է իդեոլոգիական բնագավառում:

Այս տեսակետից էլ հետաքրքրություն է ստանում Ակլատիզի զինավառությունը քարերով, որոնք եթե մի կողմից ուալ իրականությունն են արտացոլում, ցույց են տալիս պետական հսկողության ձևերը նախնական շրջաններում, մյուս կողմից, մեր կարծիքով, խորհրդանշում են կապը նեռլիթի հետ:

Հատուկ ուշադիր ծառայությունը Հին Աշխարհի ժողովուրդների մեջ կատարվում էր առանձնապես խոշորագույն աստվածությունների համար: Այդպիսին է երկում նաև Ակլատիզն իր Ռատիս տատերով ու Պատ պապերով:

Ինչպես երեսում է, Ակլատիզ աստվածության պաշտամունքի մեջ, — իբրև մեռնող և հարություն առնող աստվածություն, — հատկանշական է եղել օրերի հաշվման սովորությունը: Այդ

¹ Վ. Վ. Ստրուցե, չին Աշխարհի պատմություն, էջ 96:

² Ֆրեդրիխ Էնգելս, Ըստանիքի, մասնավոր սեփականության և պետության ծաղումը, Երևան, 1948, էջ 228:

բանի մնացուկ պետք է համարել Ակլատիզի յոթ շաբաթները ներկայացնող փետուրները, յուրացված և հավանորեն կրնատված քրիստոնեության կողմից:

Հեթանոսական նշանավոր տոների մեջ բարեկենդանը գարնան սաղմերն ընդգրկող տոն էր: Այդ տոնի մեջ թաքնված է գարնան զարթոնքի իդեան: Այդ է խորհրդանշում Ակլատիզի սոխը կամ գետնախնձորը, որը կախված լինելով տաք ու սրբազն ճանաչված, հնագույն տաճարին փոխարինող թոնրատանը— կամ թոնը վերևը, սկսում էր ծլեւ: Այդ ծլի մեջ թաքնված էր Ակլատիզի հարության գաղափարը ճիշտ այնպես, ինչպես այդ նույն խորհրդավորությունը նկատում ենք Օսիրիսի պաշտամունքներում: Վերջինիս դամբարանում հնագույն եգիպտացիները ածլող» խորհրդանիշեր ունեն, ցուց տալու համար, թե Օսիրիսն է ծլում:¹

Այս հանգամանքը մեր Ակլատիզի մեջ ամենահատկանշական կողմերից մեկն է, նրա գարնանային բնույթը պարզելու համար Փետուրներով օրերը հաշվելը մինչև գարնան վերջնական դալուստը, ինքնին հետաքրքրական է իբրև նախնական թվաբանության էլեմենտներից մեկը: Ըստ երեսույթին Ակլատիզի ձմեռնային մահը վրա հասնելիս, նրան հսկող քուրմերը ոչ թե շաբաթը մեկ, այլ օրական մեկ փետուր կամ նման մի բան էին հեռացնում աստծու վրայից, մինչև որ վրա էր հասնում զատկի նախնական տոնը: Այս եղանակը հայկական ֆոլկլորի հակակղերական նյութերի մեջ էլ է հայտնի: Մեծ պասի յուրաքանչյուր օրը, ըստ այդ առակների, քահանան մի-մի լորի է դուրս գցում իր գրապանից, մինչև որ զատիկը գալիս է: Շատ հավանական է, որ Ակլատիզի քուրմի պաշտոնը քրիստոնեության պայմաններում ստանձնած լիներ քահանան:

Ակլատիզի՝ իբրև մեռնող և հարություն առնող աստվածության ամենալավագույն գրավականը պահպանված է Այնթապի վարիանտում: Ինչպես տեսանք ավանդությունից, Խովումիկն այդ գալառում վերջին օրը պատվավոր ճաշ է աճաշակում» ընտանիքում և թշում է դառնում: Մյուս գալառներում Ակլատիզը կրում է այն շարշարանքները, որոնք բնորոշ են առհասարակ մեռնող և հարություն առնող աստվածություններին: Ախալքալա-

¹ Վ. Վ. Մարուեկ ե, չին Աշխարհի պատմություն, էջ 274: Պետք է գտնենք որ Ակլատիզի ծլած սոխը սերմացուի և զատկական կերակուրների մեջ զցելը հիմնովին կապում են այդ աստվածությունը ծլող հատիկի հետ Սոյին կամ գետնախնձորին հնում անշուշտ պետք է նախորդած լինելին ժողովուրդներին ծանոթ այլ ուտելիքներ կամ հատիկներ:

քում նրա խրտվիլակը մահակահար էր արվում և նետվում էր շուրջ խորհրդանշելով նախ նրա տանջանքը, որից հետո պետք է հարություն առներ, և մյուս կողմից սերտ աղերսը չըի ու նրա աստվածունի նարի հետ; Չարշարանքի ձեւ պետք է համարել նաև թելով կախվելը:

Չարշարանքը հատուկ էր նաև Օսիրիսին: Սրա չարշարանք-ներին էին նվիրվում հատուկ տոնախմբություններ, ¹ որոնց նման ծեսերի վերապրուկներն ենք տեսնում հենց մեր Ակլատիզին (Ախունդին) հալածող երեխաների ուրախության մեջ: Եգիպտոսում շուրն էին զցում ոչ միայն Օսիրիսին իրեն, ² այլև նրա «զլուկը պատկերացնող պապիրուսից պատրաստած» մի գունդ, և որին փառահեղ կերպով դիմավորում էին Փյունիկիայում: ³

Ակլատիզին զուրը նետելը մասամբ նման է նաև ռուսների, ավելի ճիշտ՝ սլավոնների պտղաբերության աստված Յարիլո-ի մի ծիսակատարությունը: Սրա խրտվիլակը (տղամարդու ձևով և տոնական անդամով) ռուսները հունիսի վերջերին. թաղում էին, ողբում, ապա միայն պարում: ⁴ Ինչպես տեսանք, Ակլատիզն էլ որոշ զավաներում հատկանշում է իր պտղաբերության աստվածություն լինելը, հովը բեղմնավորելու— արգասավորելու նախնական իդեան:

Ակլատիզի չարշարանքը և մահն ու հարություն առնելը մեր կարծիքով նույնությամբ անցել է Սրային, որը նույնպես տառապանք է կրում պատկերացմում և մեռնում ու Արալեպների միջոցով կենդանանում է: Այս նույն վարքագիծը մենք տեսնում ենք նմանապես Քրիստոսի մեջ: Այդ տվյալները թույլ են տալիս մտածելու, թե արդյոք Ակլատիզը Հին Հայաստանի նախահեթանոսական կամ հեթանոսական Քրիստոսը չէ՞ր, ինչպես որ ունեն ուրիշները:

Բ. ՀԹՂ ԵՎ ԲԵՐՔ

Հնագետները հավաստում են, որ Հայկական լեռնաշխարհում երկրագործության համար պայմաններ կային դեռևս էնեոլիթի ժամանակներում: Նրանց հաջողվել է պարզել, որ նախքան մեր

¹ Վ. Վ. Ստրուվի հ. Հին Աշխ. պատմ., էջ 274:

² Նույն տեղ, էջ 271:

³ Վ. Վ. Ստրուվի հ. Հին Աշխ. պատմ., էջ 274:

⁴ Брокгауз, Ефрон, Толков. словарь,—ярило рառը:

թվականությունը, երրորդ հազարամյակից մեզ հասած ցորենի մի քանի տեսակներ գոյություն ունեին: Իսկ ուրարտական պետության շրջանում երկրագործությունը Հայաստանում անասնապահության հետ միասին էկոնոմիկայի հիմնական ձյուղերն էին հանդիսանում:

Երկրագործական աշխատանքների լայն ընդգրկմամբ են բացատրվում Հայաստանում հողի պաշտամունքների վերապրուկները, որոնց հիմքը մատրիարքիալ հասարակության տնտեսաձևն էր հանդիսանում: Պատմական տեսակետից դաշտամշակության այն շրջանը, որն օժտված էր երկաթի խոփի ունեցող գութանով, ուր բավական զարգացած էր երկրագործությունը, էնդեւր տեղավորում է բարբարոսության վերնաստիճանում: Նա գրում է. «Ամենից առաջ այստեղ մենք առաջին անգամ հանդիպում ենք անասունների ուժով գործող երկաթի խոփի ունեցող արորի, որ հնարավոր դարձեց երկրագործությունն ավելի մեծ ծավալով, դաշտամշակությունը, և դրանով այն ժամանակվա պայմանների տեսակետից՝ կենսամիջոցների գործնականորեն անսահման ավելացում առաջ բերեց»:¹

Այդ շրջաններում, իբրև բոլոր ժողովուրդներին յուրահատուկ երեսությ, Հայաստանում հողագործության հիման վրա առաջացած հավատալիքները բավական համառորեն անցել են սերընդից-սերունդ, ժողովրդից-ժողովուրդ և հասել են հայկական էթնիկական խմբերին: Եվ դա հասկանալի է, որովհետև կապված է հիմնական կենսապայմաններ ստեղծող զբաղմունքի՝ հողագործության հետ:

Նախառարտական շրջանից, հասկանալի պատճառով, գրավոր տեղեկություններ չկան հողապաշտության մասին: Բայց ուրարտական շրջանը որոշ շափով լրացնում է այդ բացը: Այս շրջանի պաշտամունքները մենք գտնում ենք նմանապես հայերի մեջ, որոնց ազգագրական հարուստ տվյալները սերտորեն կապված լինելով ուրարտացիների աշխարհըմբռնումների հետ, անկասկած, արտահայտում են վերջիններիս նախնական մտածողության ձևերը:

Ուրարտացիներն, իբրև կազմակերպված ժողովուրդ, ապրելով Հայաստանի հատկապես այն տերիտորիայում, ուր հողագործությունը լիապես իրիգացիոն բնույթի էր, ուր երաշտի հաճախա-

¹ Ֆրեդրիկ Էնդելս, Ըստանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 36:

կիությունն իր իսկ, այդ ժողովրդի մեջ առաջացնելու էր միստերիաների մի շարք, չեր կարող չունենալ մշակվող հողի— «մայր հողի» աստվածությունը: «Մայր հող» ըմբռնումն ինքնին նոր չէ, այն այլպես էր համարվում բոլոր հնագույն և անզարդացած ժողովուրդների մեջ, որը մշակվող հողը որդեծին մոր հոմանիշն էր: Բայց այդ ըմբռնման, ինչպես որ կինը (նախապես) սոսկական պատճառ է մի նոր երևույթ առաջացնելու, այսինքն աստվածների, կամ հին հասկացողությամբ՝ տոտեմի տված երեխան ծնելու, նույնպես էլ հողը մի նոր երևույթի՝ բերքի-բարի պատճառ էր համարվում: Ըմբռնման այս ձևը, իհարկե, հետագայում հասնում է որոշ շափով ֆիզիոլոգիկ երևույթի բացահայտման, առանց, սակայն, ոկին-մայրը հող-մորը հոմանիշը ճանաչելուց հրաժարվելու:

Այն բանից հետո, երբ տոտեմական պրիմիտիվ մտածողության համաձայն երեխան մոր ծոցում և սերմի հատիկը հողում աճում էր ճանաշված կենդանական կամ բուսական տոտեմի հոգու աճման հետեւանքով, պիրիդացիոն տնտեսության զարգացումը բերում է այն բանին, որ աստվածները սկսում են երկրագործությունը հովանավորողների բնույթ բնոդումելու:¹

Նախնական աշխարհը մբռնման համաձայն, ինչպես հայտնի է, «մայր» հողը, «մայր» ջուրը, «մայր» արեգակը հոմանիշ են: Միջոլողիական առումով, ինչպես և սեմանտիկայի տեսակետից, այս ըմբռնումները, որ նույնությամբ գտնում ենք հայերի նախնական հավատալիքների մնացուկների մեջ, կարեոր ուսումնասիրության նյութեր են: Այդ նյութերը ցույց են տալիս, որ երկրագործության հետ առնշվող աստվածները նախապես կանացի հատկանիշներ են ունեցել:

Նախնական ժողովուրդների հասկացողությամբ հողը հոգմոր է, կենդանի է և որ նա արդասավորող մայր է կանացի բոլոր հատկանիշ գծերով: Բենդալիայում աղջիկներն իրենց տոնական պարերի ժամանակ շոյում էին հողը, նրա ոգու տրամադրությունը բարձրացնելու համար, որպեսզի նա առատ բերք տար: ² Այդ պատկերացումների համաձայն հողը սրբազն է, ամենակարող է, մայր ծնիլ և ընդունիլ (Հմմտ, «հող էիր, հող դարձիր» բանաձեռ):

¹ Վ. Վ. Ստուգե, Հին Աշխարհի պատմություն, առաջին հատոր, Երևան, 1938 թ., էջ 156:

² Г. Шурц, История первобытной культуры, вкл. II, Москва, 1923 г., էջ 629–630:

Հինգերորդ դարում պարսից թագավոր Շապուհ երկրորդին նրա դյուլողներն ու աստղագետները խորհուրդ տվին մեր Արշակ երկրորդ թագավորին փորձել վերջինիս հայրենի հողի միջոցով։ Ավանդությունն ասում է, թե Արշակը ոգերություն և քաջություն էր ապրում, երբ քայլում էր Հայաստանից բերված հողի վրա։¹ Նույն հեղինակը հաղորդում է նմանապես, թե իր ժամանակին ընդունված էր «հողեղին մարմինս ընդ հողով ծածկել»։²

Նույնպիսի սրբազան հատկանիշ ենք տեսնում նաև վնցերորդ դարու հեղինակ Հովհան Մամիկոնյանի մոտ, որը գրում էր, թե «Ձնշխարս Կարապետին... [սուրբն Գրիգոր] գնէր ի տապան բրտեայ, զի հողեղին է և ոչ ոսկեղին»։³

Հովհան Մանդակունին իր հակածեթանոսական ճառերի մեջ խարազանում է հեթանոսական պաշտամունքները և հողին ու ջրին, ինչպես և երկնային լուսատումներին վերագրվող զորությունները հերքում է հօգուտ քրիստոնեության։⁴

Հովհան պաշտամունքը նույն կերպ էր ներկայացնում նմանապես և Մովսես Կաղանկատվացին, կապված որդենության հետ և բազում ի գեօլո, ասեն, որ անորդիք լեալ են, և եկեալ ուստեալ և հող առեալ ի տեղւոյս՝ որդենութեան զաւակի հասին. և ամենայն չերմոտք հող առեալ՝ վաղվաղակի ընդունէին զառողջութիւն»։⁵

19-րդ դարի սկզբներին Խ. Աբովյանը գրի է առել հողի պաշտաման մասին մի շարք նյութեր, օգտագործելով իր գեղարվեստական երկերում։ Նա գրում է. — Մաղկավանքի ուստավորները «հող չէր մնացել, որ երեսներին չքննի, յա բերանները չքցեն»։⁶ Ըկատրախուտ ազգականք հողը բուռն առին՝ առաջ իրանց երեսին։

¹ Մատենադրութիւնք Նախնեաց—Փաւուուի Բուգանգացւոյ Պատմութիւն հայոց, ի Վենետիկ, 1832, էջ 166—168:

² Նույն տեղում, էջ 42:

³ Յովեն Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Եղիան, 1941 թ., էջ 100:

⁴ Տեսան Յովհաննու Մանդակունոյ հայոց հայրապետի ճառք, երկրորդ տպագրութիւն, ի Վենետիկ, 1860, էջ 198:

⁵ Պատմութիւն Աղվանից. արքեալ Մովսեսի Կաղանկատուացւոյ. . . , Փարիզ, 1860, էջ 169: Տես նաև էջ 147:

⁶ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, չորրորդ հատոր, Երեան, 1947 թ., էջ 6:

խփեցին»,¹ ուռ որի հերն ըլի գլխին, դոշին ծնծում, որի նշանածը հողին առնում, առաջ իր երեսին ածում, հետո ազիզ սիրելու երեսին քցում [գերեզմանում], ու հետը թուկանում, գետնին դիպչում»;² «Չորիս գետնին, բարին հողին մեղա տաս»,³ «անկուշտ հողին իր բերանը բաց արեց», «Հողն ու գերեզմանը իրանց տվածը տանում» են,⁴ «թե չար մտքով ըլիմ էստել էկած, ու էսպես գյոռ, էսպես մեկ բուռը հող աշխարհումն ինձ փայ ըլիօ»;⁵

Երդումների մեջ հողը սրբություն է նաև այլ գավառներում:

«Այտի քու կայնած տեղիդ սուրփի հողը վկա», «այտի սուրփի հողին աժնիկ ըլլիմ, թե...» «էն սուրփի հողը ըլ մտնեմ, թե...» (Ախալքալաք), «երկինք, գետինք, անտված վկա» (Արճեշ),⁶ կամ «հողը նրան խարար չտա»,⁷ «էնոր պես մարդ հողը չի ծնել» (Կարս և ազուր), «հազար անգամ էն սուրբ հողին, գետնին ընկան, համբուրեցին ու ծովը դրեցին»,⁸ «մեկ բուռը հող էլա՝ ծոցը կամ շեքը դնի, որ հիշատակ մնա»,⁹ «հողն իմ ձեռովս եմ առել, որ երեսի քսեմ»,¹⁰ «օղորմիս հողին, չհասնի կողին», «Խաթուն Տիրամոր գերեզմանից հող բերին, շրով տրորեցին լցին (հիվանդի) բերան...»,¹¹ «հողը քաշե կը» (Կարնո հայեր) և այլն: Ապա Աղամն ստեղծագործվեց հողից, ուստի և այն խոսքը, թե՝ «հող էիր, հող դարձիր»: Քրիստոնեության մեջ ժառանգություն էր մնացել նաև «երկիր պատանելը», որը նույն հողի պաշտաման արդասիքն էր:

Ստացվում է, որ հողին հատուկ է սմարդ ծնելք-ը, ինչպես նրան իր խորքերը քաշելը, որ նա մուրագատու է, բուժիլ է, լրատու կամ լրատար է, որին հատուկ են այն հատկանիշները, ինչով օժտված է կենդանի մարդը:

1 Ա. Արովյան, Երկերի լիտկ., ժող., IV հ., Երեան, էջ 44:

2 Նույն տեղում, էջ 40—41:

3 Նույն տեղում, էջ 222:

4 Նույն տեղում, էջ 30:

5 Նույն տեղում, էջ 26:

6 Ա. Հայկունի, Ժող., երդ, առած, ասած, հանելուկ, երդում (և այլն), ինձ, հատոր Զ, Մասկվա—Գաղարշաղատ, 1902, էջ 338:

7 Ամ առունի, Հայոց բառ ու բան, էջ 401:

8 Ա. Արովյան, Ընտիր երկեր, հատոր առաջին, Երեան, 1939, էջ 123:

9 Ա. Արովյան, Ընտիր երկեր, Ա. 1939, էջ 133:

10 Նույն տեղում, էջ 176:

11 Գ. Արգանձոյնց, Մանանա, էջ 83:

Այս երկուլիքները մեզ են հասել դեռևս անիմիստական շըրջանից, որպիսի ըմբռնման մեջ անշունչ առարկաներին վերագրում էին նման հատկանիշներ:

Ժողովրդական հավատալիքները հողին պարարտանալու, գիրանալու հատկություն էլ են վերագրում: Արծկեի հանելուկն ասում է. «Աշխարքի մեջ ինչ աղավ—հող»:¹ Իսկ պավ կամ կլավ նշանակում է պարարտ, գեր, այսինքն այն էությունը, որով ծլող հատիկն աճ ու բերք է տալիս:

«Սասունցի Դավիթ» էպոսի մեջ Պստիկ Մհերին հողը չի ընդունում. նա հարկադրաբար մտնում է Ագռավու քարը:

Կովկասյան ժողովուրդների, ի թիվս որոնց և հայերի հավատալիքներում հայտնի էին «հողի տերեր», — ոգիներ, որոնք ապրում էին արտերի հողի մեջ և գուրգուրանք էին պահանջում: Արտերն իբրև բերքի «ծնիներ», դարձել են պաշտամունքի վայրեր, սկսած այն ժամանակներից, երբ կինն իր ձեռքով մշակում և նրանով սնունդ էր հայթայթում:

Շուրջը գրում է, թե. «Երկրագործությամբ զբաղվող ժողովուրդների մեջ հեշտությամբ առաջանում է այն միտքը, թե արգասավորող հողը ոգի ունի (կենդանի է, հոգեսոր է). այդ պատկերացումից բարձր կրոնական միֆոլոգիաներում սովորաբար առաջանում են մեծ մասամբ կանացի աստվածություններ, որովհետև հողն ըմբռնվում է որպես կենդանության արգասավորող մայր, կանացի բոլոր հատկանիշ գծերով»:²

Բարբարոսության ստորին և միջին աստիճաններում, երբ արտադրողական ուժերը և արտադրության գործիքները գտնվում էին ցածր զարգացման աստիճանի վրա, ձևավորվող հավատալիքները կապվում էին հողի և սերմի հետ: Իբրև այդ հավատալիքների վերապրուկներ, կարելի է մատնանշել Շիրակի սովորություններից հետևյալը:

Գյուղացին, — գրում է բանասերներից մեկը, — «սերմացուն հանել լցրել է զվալները. մի աման սերմացու, մի սամոտեն ու մի հում հավկիթ վլեն դրած, ժամումը քահանային օրհնել է տվել: Օրհնած սերմը խառնել է ցանքի սերմացուի հետ, որ առատ ու պտղաբեր լինի, իսկ հավկիթը պետք է զարկե մարալ եղի ճակատին ու սամոտենն էլ փաթաթե սամու վրա, որ եզներին աշքով

¹ Ս. Հայկունի, Ժողովրդ. երդ, առած, ասած..., էԱԺ, Զ. 353:

² Г. Ռուբ, նույն աշխ., էջ 629—630:

շտանք:¹ Այս սովորությունը միանգամայն ընդհանուր էր Հայաստանում և Կովկասում:

Բերքի կամ արտերի ողիներին նվիրված սերմնացանի մի երդ կա, որի մեջ ասված է.

Անունն ի աստծոն,
Դու տաս հաջողում,
Էս մե բուռն անցվորականի,
Էս մեզն էլ թոշուններին,
Էս էլ աղքտներին,
Բոլոն-թոլուն,
Կերեք իմ ցանածից,
Կշտացեք,
Եվ իմ ցանածին
Բարաքաթ ասեք:²

Յանքի շրջանում՝ անցվորականին, աղքատներին, թոշուններին, իսկ այլ երգերում նաև սերկրային սողունքներին մեկ-մեկ բուռ հաց (=սերմ) բաշխելը մեր ժողովրդական պատկերացումների մեջ կավված է հնագույն պաշտամունքների հետ: Այս պրակտիկան ելնում է այն բնական աղետներից, որոնց ենթակա է եղել ցանքն ընդհանրապես, նախնական երկրագործի համար բոլորովին անըմբոնելի պայմաններում:

Վերոբերյալ երգի մեջ մեզ անձանոթ օրունա և Թուլուն բառերը հավանորեն աստվածությունների անունների մնացորդներ են, կապված երկրագործությանը բարիք բերող պատկերացումների հետ: Ինչպես որ սերմնացանը շոյում է արտերի վնասատու կենդանիներին ու թոշուններին, ճիշտ այդպես էլ՝ ոգիներին: Ռեալ աշխարհի այս անդրապատկերումը կրոնական իդեոլոգիաներում հատուկ էր բարբարոսության շրջանի, մանավանդ նրա ստորին աստիճանի մարդու համար:

Մեր կարծիքով այստեղ ըռ+լ+ուն և թռ+լ+ուն, այսինքն՝ տրական հոլովում ըռ+ին ու թռ+ին պետք է հասկանալ օրու ոգուն և Թուն ոգուն հաց=սերմ տալ: Ըու-ը և թռ-ը արմատներն են, լ+ուն ածանցների հավելումով: Հնարավոր է, որ դրան-

¹ Աղ. Մի ի թարյան, Փշրանքներ...., էնժ, Ա, էջ 275:

² Արամ Հանաւալանյան, Հայ շինականի աշխատանքի երգերը, Երևան, 1937, էջ 100-101:

ցից ըռ-ը կապվեր «ըռանահավաք» կոչված մի անստույգ թոշունի անվան հետ, որը պահպանված է միջնադարյան երգերից մեկում:¹ Արդյո՞ք ըռան +ա +հավ, այսինքն ըռանի նման թոշուն, հավ, նման եղիպիների Մալաք-Տառլին կամ ժողովրդական արտասանությամբ՝ Մալաք-Տառլին, որը կերպավորված է սիրամարդ թոշունի մեջ:

Անհասկանալի ըռ-ը կամ ենթադրյալ ըռան-ը արդյոք այդ աստվածության դերիվատը չէ²: Արդյոք մենք գործ չոմնե՞նք «ըռդգող» հավի կամ աստվածության հետ, որի իսկական անունը տալը հին եղիպտացիների և ուրիշների ձևով արգելված էր: Հին եղիպտացիք նման աստվածությունների անունները երբեք չեին արտասանում: Տարվա ընթացքում միայն մեկ անգամ, տաճարներում, քուրմերը հատուկ արարողություն էին կատարում նրանց անունները հիշատակելու համար: Բայց ժողովուրդը, այն վայրկյանին, երբ պիտի լսեր այդ սիրված աստծու անունը, մեծ աղմուկի մեջ կորցնում էր քուրմի արտասանությունը: Նմանապես և թագավորների անունները, որով էլ նրանց անվանում էին «փարավոն» («մեծ տուն»):³

Գուցե այդ պատճառով էլ ըռ-ի, ինչպես և թռ-ի իսկական անունը մեզ չի հասել: Թվում է, թև ըռ+լ+ուն-ը երկրագործական հավատալիքներում ըռըգող— խռովող պետք է լիներ, որովհետև մենք ունենք ըռդեկլ բայց, որ նշանակում է «Զարացած լինելով հակառակել ամեն բանի, կամակորել, թարսվել, խռովիլ: Հավանորեն՝ հակառակել-ից», որի գավառական այլ ձևն է հագրողել և հակ-ի անկումով, ըռկել, հռկելք՝ իսկ աստվածության խռովությունը միֆոլոգիաների մեջ հայտնի երևույթներից է:

Ինչ վերաբերում է թռ+լ+ուն-ին, դա, մեր կարծիքով, ներկայացնում է նախորդի կինը, որին հռմանիշ է թուլան-ը, թոշկոտող, ոստոստող, ցատկոտող նշանակությամբ, իբրև մակդիր (համեմատել հրեական լիլիթը):

Երկրագործական հավատալիքների մեջ ըռ+լ+ուն-ին ու թռ+լ+ուն-ին նման է Վասպուրականի խըլվիկ կոչված ոսկին, որը բնակվում էր արտերի մեջ և բերքի արդյունաբերողն էր համարվում:⁴

¹ Ամատունի, Բառ ու բան, էջ 198:

² Վ. Վ. Ստրուվի, հին Աղյարհի պատմություն, էջ 227:

³ Ստ. Մալիսայանց, Բացատր. բառ., Բ, 69–70:

⁴ Ե. Լալայան, Վասպուրական, Աչ, էջ, 205:

«Խլվլիկ» անունով ժողովրդական տոնը հայտնի էր Սուրբալուի, Վալմաստի և Խոյի հայերին։ Սուրմալեցիների պատմելով այդ տոնը, որ կապված էր բերքահավաքի հետ, տոնվում էր նոյներին։ Տոնի օրը փոքր տղաները մի-մի տոպրակ կամ մի-մի գուլպա էին կախում հարեւանների երդիկներից և հատուկ երգ էին երգում։ Հարեւանները տոպրակների մեջ միրգ կամ աղանձ էին լցնում։

Բանահավաքներից մեկը 1893-ին գրում էր, թե Սալմաստի և Խոյի հայերի մեջ խլվլիկի տոնը, որը «ճավասարդի ավանդական տոնի հետ է կապված», տոնվում էր իբրև նոր տարի։ Այդ օրը (ցուց չի տվել ամսաթիվը) ճոխ սեղաններ էին պատրաստվում, և գյուղերում մարդիկ միմիթարության համար այցելում էին իրենց դժբախտ բարեկամներին (=հմմտ. քրիստոնեական նոր տարին, երբ ճիշտ նույնն էր կատարվում հայկական գյուղերում)։

Նրանկարագրությամբ խլվլիկ էր կոչվում 8—12 տարեկան երեխաների խոռոչը, որը գուլպաներ էր կախում երդիկներից ցած և տում հետեւյալը։

Ալիք մարեմ, մարեմ, մարեմ,
Չեր տղայի սոլը կարեմ,
Չամիչ տվեք՝ ատամներս շարեմ,
Ընկեռզ տվեք՝ գլոխս ճարթեմ,
Փշատ տվեք՝ փորս լարեմ,
Շաքար տվեք՝ շայ խմեմ,
Պնդուկ տվեք՝ սիրտս ուզելի,
Կարկատ տվեք՝ փորս լցնեմ,
Քյոխվա, տանտեր, մի խնայի,
Աստված ձեր խարսն ու փեսան պախի։¹

Ինչպես տվյալներն են ցուց տալիս, խլվլիկը նավասարդի կամ ամանորի— վեգետացիայի և բերքի ու պտուղների պահպան աստվածությունն էր հեթանոսության շրջանում։ Այլ կերպ ինչո՞վ կարելի է բացատրել, որ նա արտերումն էր ապրում (Վան), որ նրա տոնը բերքահավաքին էր կատարվում իբրև նավասարդի տոնը հատկանշող, և որ նրա համար երգեր կային։ Եվ եթե վերոհիշշյալ տվյալները ճիշտ են, երեխաների խոռոչը ներ-

¹ Սալմաստեցի Մ., Խլվլիկ,—Արձագանք, 1893, № 1։

կայացնող «Խւլվիկը» պետք է որ բերքերից բաժին ուզող աստվածը լիներ: ¹

Համշենցի հայերի մեջ հողապաշտությունը, կապված բերքի հետ, արտահայտվում էր նրանով, թե օքանելիս տրեխը մտած հողը պետք է արտում թափվի, թե չէ արտի «բէ» թէ «քէ» թը կը գնած: ² Իսկ Ախալքալաքի երկրագործների կարծիքով ըստապահը ցանքն սկսված օրվանից մինչև ավարտը չպետք է հանվեր. Հողը տրեխների և գոտու մեջ, իր սերմոնքների հատիկներով պետք է մնար, ծեր, որպեսզի տունը բարձրացնի մտներ: Այստեղ շամուանացածներն իրավունք չունեին ցորեն ցանելու: Այդ պատվավոր պաշտոնը կատարում էր տան մեծը կամ խելացի մեկը, որն արդեն զավակների տեր էր դարձել, վերջինս, սակայն, պարտավոր էր խոսափել կենակցությունից:

Շաբաթվա որոշ օրերին, հատկապես ցանքի ժամանակ չկենակցելու սովորությունը հայտնի էր նաև ուրիշ գավառներին, ³ հակառակն այն նախնական մտայնության, երբ ցանքի շրջանում մերձավորությունը ոչ միայն թույլատրելի, այլ նույնիսկ պարտադիր էր հենց վարած-ցանած արտերի մեջ: Մեսը լինելով վարակիչ մագիայի օրինակներից մեկը, հետապնդում էր հոգին բեղունություն հաղորդելը: Մեր մեջ, ըստ երեսույթին, այդ մագիկ գործողությունների մնացուկները քրիստոնեության պայմաններում ար-

¹ Հմմտ. «ինչ խլիկ՝ ինչ խլվիկ...» (Գ. Շերենց—Վանա սագ, Բ. 140): Երակում դա «զվարթ, կայտառ, շարժուն, աշքաբաց» էր նշանակում (*Մի ի թարյան, Փշանք...*, Էլմ, Ա. 317): Վանում խլվիկ էր կոչվում նաև մի տեսակ թռչուն, որի բունը խլիկ էր անվանվում, իսկ նրա ձուն՝ «խլվիկունիկ»: Այդպես էր կոչվում նաև վայրի բանջարի մի տեսակը Թավրիզում (Պատ. բառ. 472):

Խլվիկը Սալմասոսում, Արշակ Աթայանի նէարագրությամբ, չար առում ուներ, որի տոնը կատարվում էր նավասարդին: Նա (Խլվիկը) ուռական արտերի բարի ողի բարկա-ի նման բարկանում էր, երբ իրեն չէին փայփայում (*Արշակ Աթայան. Սալմաստ, 1906 թ.*, էջ 145). բարկա-ի մասն անս Հ. Բ. Գրինկովա. Օճայդ „Վոյցն բարկա-ի մասն“ այլն Հ. Բ. Վերեյկա Վորոնեժսկոյ օբլ.: СЭ, 1947 թ. № 1, էջ 178–184:

² Հ. Մուրագյան, Համշենցի հայեր, Ակ, Զ. 115:

³ Ե. Լալայան, Զավախը, էջ 150:

⁴ Մ. Հայկունի, Ժող. երգ, առած..., էլմ, Զ, էջ 136: Այստեղ Ալաշկերտի գութաներգի մեջ ասված է. «Զուապ տարեք խազնատարին, ճիժ չվասակի կիրակմտին» և այլն:

գելվեցին, թեև գութաներգերի մեջ բազմաթիվ են դրա սիմվոլիկ ձևերը հայույանքներով:

Բէ՛րէ՛քէ՛թը Համշենում հավանորեն հողի արքասավորության ոգին է, ինչպես որ այդ նույն նշանակությամբ մարդակերպավորված են տնային բարաքաթ կամ դովլաթ կոչված ոգիները: Իսկ Ախալքալաքի հավատալիքներում տրեխի և գոտու ծիլերը մատնում են իրենց՝ նմանով նմանն ստեղծելու մագիկ ձևերի էռթյունը:

Հեթանոսական պաշտամունքի մնացորդ էր Բորչալուկի գավառի հայերին հայտնի Ուրում կոչված դեր, որը հացահատիկի կերպարանքով տարածվում էր ցորենի ցանքսերի մեջ:¹ Արտերի մեջ նման դեմքի դեմ պայքարող ոգիների կամ թերևս աստվածությունների պաշտաման մնացուկներ էին այն խրտվիլակները, որոնք Ախալքալաքի և այլ վայրերի հայերի սովորությամբ կանգնեցվում էին տիկնիկի ձևով (=իբրև թե դրանք ճնճղուկ խրտնեցնողներ էին):

Ճիշտ այդ ձևի խրտվիլակ են կանգնեցնում այժմ ոռւա աղանդավոր գովարունները Բոդդանովկայի շրջանում:²

Հայաստանի շատ գավառներում արտերը հնձելիս սովորություն կար՝ ավարտի ժամանակ ցորենի հասկերից փոմազ կապելու և արտատիրոջը նվիրելու ինչպես այս փոմազը, նմանապես և հնձի աշխատանքների ավարտման կապակցությամբ կազմակերպած խնջույքը, որը կատարվում էր արտատիրոջ կողմից, սինչփոմազ կամ «խաչփոմազ» էր կոչվում:³ Առաջներում հացի հոմանիքը վերջացնելուց հետո, հնձվորներից մեկը մի հսաշքուած էր հյուսում և շտապելով տուն, նվիրում էր մորը, ասելով «բերքը բարի յա»: Տանտիկինն օրհնում էր, բարեմաղթում, և ձվաձեղ կամ գաթա խոստանում:

Հետաքրքրական է, որ Արարատյան գաշտում այդ սովորությունը վերապրում է մի այլ ձևով: Կոլխոզնիկները հացը հասնելիս, երբ արտերն են գնում, նրանցից մեկը նոր ձևի հսաշքուած է հյուսում և ըերուամ, նվիրում է կոլխոզի նախագահին, իբրև տընտեսության ընդհանուր ղիկավարի: Իսկ հնձի ժամանակ, երբ նախագահն այցելում է նրանց կոլխոզի արտերում, հնձվորներից

1 Ե. Լալայան, Բորչալուկի գավառ, ԱՆ, Ժ. 198:

2 Հմմատ. Ա. Պ. Գրիգորյան, նույն աշխատ. ԸԹ, Խ. 1, էջ 178—184:

3 Ամատունի, Բառ ու բան, 277, Գավառ. բառ. 454, Պերճ Պռոշյան—Սոս և Վարդիթեր, 1887, էջ 83:

մեկը մի խուրձ ծղոտ է դնում նրա առաջ և ասում է. «Էս քեզ փեշքաշ»: Նախագահը բերողին նվերներ է տալիս և շնորհավորում է կոլխոզի առատ բերքը:¹

Այդ ժեսը Շիրակում «արտախիս» էր կոչվում² (=խլսել—վերջացնել, պրծնել, նաև վերջանալ):

Խելքունցի ձեռվ «ավել» էին կապում Ախալքալաքի հայերն ու դումաբոռները, խոտերի դեգերի ճակատները զարդարելու համար:

Ինչպես երևում է, հայերի երկրագործական հավատալիքների ու պաշտամունքների մեջ պահպանված այդ մնացուկներն աղերսվում էին հնագույն կրոնական պատկերացումների հետ: Այդ պատկերացումները երկու հիմնական էտապներում գտան իրենց վախճանը, թողնելով միայն մնացուկներ: Առաջին հարվածը, մեր կարծիքով, դրանք ստացան հայ ժողովրդի կազմավորման սկզբներում, երբ պահանջվում էր հասարակական կեցության և նրան համապատասխան կրոնական իդեոլոգիայի համադրություն, սկզբունքների նույնություն (=համեմատել եպիպտական նոմերի նման կրոնական սկզբունքների քաղաքականությունը): Երկրորդ և առավել ուժեղ հարվածը հասավ Հայաստանում քրիստոնեության մուտքի շրջանում, երբ օրենքով արգելվում էին հեթանոսական պաշտամունքներն ու հավատալիքները: Եվ որովհետև ամի անգամ ծագելով, կրոնը միշտ էլ պահպանում է պատկերացումների՝ նախկին ժամանակներից ժառանգած որոշ պաշար, որովհետև իդեոլոգիայի առհասարակ բոլոր բնագավառներում ավանդությունը մեծ պահպանողական ուժ է»,³ նախահայկական ու հայ հեթանոսական կրոնական զմբռումների մի մասը մնացուկային կամ փոխանցման ձևով որդեգրվեց քրիստոնեության կողմից: Այդ հավատալիքների և պաշտամունքների մի մասը մենք գտնում ենք «Սասնա Մռեր»-ի վարիանտներում: Այստեղ հողի և բերքի աստվածութիւն է համարվում էպոսի Պառավ Նանեն: Ակադ. Հ. Ա. Օրբելին էպոսի այդ հերոսուհում՝ Մեծ Մհերի վաղեմի սիրուհուն նույնացնում է մայր հողի հետ և համեմատում գերմանացիների նույն պաշտոնի տեր էրդային ու հումական Դեմետրային:⁴ Սասնացի պառավի մեջ մարմնավորված է հոմանաքը—բերքը հովանավորող աստվածուհին:

¹ Իժ՝ «Ուղեորություններ» տետրս, էջ 131:

² Աղ. Մի թարյան, Փշրանք, ., էնֆ, Ա, 285:

³ Ֆ. էնգելս, Լուգվիդ Ֆոյերբախ, Երևան, 1948, էջ 65:

⁴ Ակադ. Հ. Ա. Օրբելի, «Սասնացի Դավիթ» էպոսը. ԽԳ, 1939,

Թվում է, թե սասունցի այս Պառավը՝ Հունձքի-բերքի և մայր-հողի այս աստվածուհին նարի զուգորդումն է մի այլ միշավայրում:

Պառավի ֆունկցիաների մեջ խուլ արձագանք ենք տեսնում նաև ուազմի գծով: Փաստորեն հայրենիքի պաշտպանովթյան ամբողջ իդեան Դավիթը պառավից է ստանում: Իգական լինելը, անկասկած, նշանակություն չունի, որովհետև մատրիարքաւ հասարակության ուազմիկները նաև կանայք էին հանդիսանում: Հերոդոտից հետո Հիպոկրատն էլ (470—356 թ. թ. մ. թ. ա.) հաղորդում է, թե սավրումատների կանայք գնում են ծիով, կրակում են աղեղներից, կրում են նետեր և վարում պատերազմները:¹ Պառավն էլ Սասունում նույն զենքերի և նրանց գաղտնիքների մասին հաղորդում է Դավիթին և օտարների դեմ կրվի է հրահրում: Իսկ նգիպտոսում պատերազմի կատաղի աստվածուհին Սոխմետն էր մի ժամանակի²

Պառավ-աստվածուհու՝ ինչպես երկրագործական հատկանիշը, այնպես և այդ ուազմումակությունը, մատրիարքաւ հասարակությունից հետո տեղի է տվել: Վեպում երբեմն հանդես եկող աշեորը՝ Խալվոր կամ Պապիկ ձևով,³ ճիշտ նույն պաշտոնն է ստանձնում, իսկ մի վարիանտում նրանք հանդես են գալիս զուգորդաբար նույն տեղում:⁴ Անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում այս աստվածությունների զարգացման էվոլուցիան, որով կարգաբանվեն հողագործության էտապները ինչպես Սասունում, նմանապես և Հայաստանի մյուս գավառներում:

Դասակարգային հասարակության պայմաններում, երբ սԱստղաբաշխությունը — հենց տարվա եղանակների համար-բացարձակ անհրաժեշտություն է թե' խաշնարած և թե' երկրագործ ժողովուրդների համար»,⁵ պրիմիտիվ մտածողության հետեվանքով երկրային աստվածությունները սերտորեն կապվում են երկնային լուսատուների հետ: Հնագույն թաքելոնում այդ պաշտամունքը բավական հարուստ նյութեր է թողել: Նրա մի շարք աստվածները նույնացվում էին երկնային լուսատուների հետ:⁶

¹ М. О. Коcвен, Из истории проблемы матриархата. СЭ. 1946, № 1, էջ 33:

² Վ. Վ. Ստրուվ, էին Աշխարհի պատմություն, էջ 279:

³ Սասնա Մոեր, հատոր առաջին, էջ 804, 907—971, հատոր Բ, էջ 24—25:

⁴ Սասնա Մոեր, հատոր առաջին, էջ 1045—1046:

⁵ Ֆրիդրիխ Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1936, էջ 63:

⁶ Վ. Վ. Ստրուվ, նույն տեղում, էջ 156—157:

Հայկական դիցաբանության մեջ քիչ չեն աստեղային կրոնի մնացուկները, որոնք լուրջ ուսումնասիրման կարոտ են:

Աղթարական գրականության մեջ արտացոլված են այդ տարրերը, որոնց մեջ հետաքրքրության արժանի են այն պատկերացումները, որոնց համաձայն աստղային որոշ խմբեր ու ներկայացուցիչներ անմիջապես կապվում են երկրագործական գործիքների; անասունների և երկրագործի հետ: Այսպես, օրինակ, Գութանի կամ Վեցկիի աստղ,¹ Սայլ կամ Մեծ արջ,² Զրաբաշխ,³ Ցորենքաղ մշակ:⁴ Միջնադարյան մի տոմարագիր,— որի ով լինելը Ալիշանը չի հաղորդում,— աստղերի մի խումբը ռևառնարան աստեղք» է անվանում, ավելացնելով. «Այս աստեղք են, որ ցուցանեն զանձրեաց սաստկութիւն. և որ ի ծովուն գնան սոքիմք՝ մանաւանդ Սայլն՝ յայտնի ցուցանէ գնաւագնացաց հետո»:⁵

Աստեղային կրոնի մի զգալի հատվածը, կապված լուսնի հետ, արտահայտում է գուշակման արվեստը: Նույնը վերաբերում է նաև արեգակին: Վերջինիս պայծառ գույնը ժողովրդական պատկերացումներով կապվում էր երկրագործության հաջողությունների հետ և ընդհակառակը, կարմիր գույնը՝ աշխարհավեր երեւլյթների հետ:

Լուսնի մահիկի միջոցով եղանակի գուշակությունները մեր օրերումն էլ տակավին չեն կորցրել իրենց մնացուկները: Նորալուանի մահիկի ծայրերը դեպի վեր ուղղված լինելը շոր-պարզկա եղանակ էր գուշակում, իսկ կախվածությունը՝ անձրևայնություն:

Աստեղային կրոնի հետքեր կան նաև «Սասնա Շոեր»-ում: Ձենով Օհանը Սասնա բախտն ու ճակատագիրը կապում էր Սասմա աստղի հետ: Ցուան Վերգոյի տղայի անունը Պարոն Աստղիկ էր, որի ծովային էությունը կապվում էր երկնքի հետ: Վեպի Ալաշ-կերտի մի վարիանտում Աստղու Ցոլածին արական հերոսը Մհերի հետ կովելիս վերկից էր հարվածում նետ ու աղեղով: Մհերը նրան սպանում է մեծ երկյուղից հետո միայն: Աստղու Ցոլածին անունն ինքնին ցույց է տալիս նրա տիեզերային հատկանիշը:⁶

¹ Զ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 115:

² Նույն տեղում, էջ 112, 129:

³ Նույն տեղում, էջ 129:

⁴ Նույն տեղում, էջ 130:

⁵ Նույն տեղում,

⁶ Սասնա Շոեր, Բ, էջ 346—347:

Հայկական կենցաղում բազմաթիվ զարդեր են հայտնի արեգակի և զուսնի ձևերով, որոնք հավատալիքների մեջ դրսելորված են իրեն շարխափան հմայիլներ։ Անասունների համար պատրաստված հմայիլները փորագրվում էին աստղերի, լուսնի և արեգակի սիմվոլներով։ Սրանք, անկասկած, կապվում էին անասնապահության, ինչպես և երկրագործության հետ, իրեւ կոսմոգոնիկ պատկերացումներ։ Այդ պատկերացումների մասին որոշ տեղեկություններ ենք գտնում մեր մատենագիրների մեջ, ուր լուսինը խոտերին է հսկում,¹ ուր աստղագիտությունը — հմայությունը խոշոր նշանակություն ունենալով հեթանոսության մեջ, քննադատության է արժանանում քրիստոնեության կողմից,² ուր մարդը երդվում է աստղերի, լուսնի և արեգակի վրա,³ ուր գարեգությունը դառնում է գուշակման եղանակ,⁴ ուր երկնային լուսատուները դառնում են շինվածքների (բերդերի) անվան հիմքը⁵ և այլն։

Գ. ԶՈՒՐ

Փորձելով ուրվագծել ջրի պաշտամունքի զարգացման աստիճանները, պրոֆ. Խ. Մամուելյանն այն բաժանում է երեք հիմնական էտապների։ Առաջին, պալեոլիթյան շրջան, երբ հասարակական կազմակերպությունը տուտեմականն էր։ Երկրորդ. նեոլիթյան շրջան, ուր տնտեսական գլխավոր զբաղմունքներն էին անասնապահությունն ու երկրագործությունը, երբ մարդը բնության մեջ կրավորական լինելուց աստիճանաբար սկսում էր ազատվել, երբ նա քիչ թե շատ կովել իմանալով բնական աղետների դեմ, մագիկ գործողություններով իրեն էր ուզում ենթարկել բնության երկութիւնները, երկրագործության մեջ կինն այս շրջանում մեծ դեր էր խաղում, ուստի ձևավորված պաշտամունքներն ու աստվածություններն օժտված են կանացի հատկանիշներով։ Երրորդ.

¹ Տեսո՞ն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք, 1860,

էջ 198։

² Նույն տեղում, էջ 197։

³ Նույն տեղում, էջ 122—123։

⁴ Նույն տեղում, էջ 194։

⁵ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941,

էջ 180։

մատրիարխատի անկման և պատրիարխատի առաջացման շրջան, երբ սոցիալ-տնտեսական նոր հարաբերություններում առաջատար դերը տղամարդուն էր պատկանում, ուստի և առաջանում են տղամարդու հատկանիշ գծերով օժտված աստվածություններ և հավատալիքներ։¹

Հեղինակի այս կարծիքը մենք բաժանում ենք:

Լայն առումով ջրի պաշտամունքը հայերի, ինչպես և այլ ժողովուրդների մեջ ընթացել է այդ էվոլյուցիայով։ Այս տեսանկյունով նայելիս, այդ պաշտամունքների մեջ գտնում ենք ինչպես անիմիստական ու տոտեմական, նմանապես և հետագա կրոնական պատկերացումների հիմքերը։ Դրանց մեջ խոշոր տեղ է բռնում մագիան։

Զուրն իբրև մարդու կենցաղային անհրաժեշտության առարկա նախնական շրջանում դառնում է սրբազն բան։ Զրի հոսունունակությունը մի կողմից, իբրև անհասկանալի երևույթ, մյուս կողմից ներկայացնելով բնական աղետի առարկա, որը կարող էր սրբել-տանել մեղի ու ողորմելի բնակարանները, մարդկանց մըշակած հողերը, անասունների հոտերը և նախիրները հեղեղման միջոցով, դառնում է նաև շար ուժի մարմնավորումը։

Իբրև բարի հատկանիշ գծեր ունեցող երևույթի հիմք կարող էին դառնալ ոչ միայն սովորական կենցաղային անհրաժեշտության համար բանեցնելիք շրերը, այլև անձրևներն ու ոռոգող ջրերը իբրև սոցիալական հարաբերությունների մեջ զարգացում մտցնող էլեմենտներ։ Այդպիսիք կարող էին լինել անձրևներն ու հոսող ջրերը երկրագործ տոհմերի և ցեղերի համար և հանքային աղբյուրների շրերը։ Այս պատկերացումները մշակվում էին սկսած գեռևս բարբարոսության ստորին աստիճանի մարդու կողմից, երբ սինովիտյան ճիշտ արտացոլումը շափականց դժվար է։ այն փորձի երկարատև պատմության պրոդուկտ է, Բնության ուժերը նախնադարյան մարդուն պատկերանում են իբրև ինչ-որ օտար, խորհրդավոր, ճնշող ուժեր։²

Գետերի, լճերի ու ծովերի պաշտաման մեջ մեծ դեր է խաղացել առավելապես նրանց մեջ ապրող կենդանիների գոյությունը, որով սնումդ էր հայթայթվում ձկնորսության շրջանում։

¹ Խաչիկ Սամուելյան, Հին հայաստանի կուլտուրան, հատոր առաջին, Երևան, 1931, էջ 296—299։

² Ֆ. Էնգելս, Անտի Դյուրինգ, Երևան, 1940, էջ 473—474։

Նստակյաց երկրագործների համար ավերիչ դեր էին խաղում կաթկուտն ու ահեղ երևույթները, որոնց պատուհասիչ ուժի առաջ նախնական երկրագործը, — անկարող բացատրելու դրանց պատճառները, — շարության ունակություն էր վերագրում դրանց:

Թե՛ բարի և թե՛ շար առումով ջրի հետ պաշտամունքի առարկա են դարձել երկինքը — ամպերը, գետերն ու աղբյուրները:

Մրանք են այն ընդհանուր էլեմենտները, որոնց հիման վրա, սկսած ամենանախնական երկրագործական էտապներից մինչև քրիստոնեության հաղթանակը Հայաստանում, կազմվել, մշակվել, շերտավորվել և մեղ են հասել ջրի — անձրևի պաշտամունքների և հավատալիքների ձեւերն իրենց մնացուկներով:

Իբրև երկրագործության համար վճռական նշանակություն ունեցող գործոններ, նշանակալից են Հայաստանի գետերի պաշտամունքին վերաբերող հատվածները: Եփրատն այս տեսակետից ամենանշանավորն է, որի վրայովն անցնողները, իբրև թե զորություն կունենային օգնելու գժվարածին կանանց և անբուժելի վերքերը բուժելու¹ Մեղ հայտնի են նմանապես սրբազնացված գետերում հիվանդ մարդկանց ու անասուններին լողացնելու դեպքեր, իբրև բուժման միջոցներ:

Հայերը հներում հավատում էին, թե գետերում և գետակներում ապրում են օրի աղջիկները,² ջրերում արձակ մազերով ու մերկ մարմնով զայթակղիչ դեր էին խաղում ոչրի հարսները» կամ «փերիզգիները»: Երևույթներ, որոնք գրեթե նույնությամբ տեսնում ենք կովկասյան մյուս ժողովուրդների՝ վրացիների, չերքեզների, դաղստանցիների և այլոց մեջ, ուր որ երբեմն հանդես էին գալիս ջրի ոչ միայն իդական, այլև արական ներկայացուցիչները:³

Հայկական դիցաբանության մեջ հոչակավոր Աստղիկ դիցուհին նույնպես ապրում էր Եփրատի ալեծուփ ջրերում,⁴ որի պաշտամունքն առանձնակի ձեռվ տարածված էր այդ գետի միշավարի հայերի մեջ:

¹ Գ. Սրգանձտյան, Մանանա, 67, Ե. Լալայան, Վասպուրական ԱՀ, Ի, 167, ԱՀ, ԻԵ, 32, ԱՀ, ԻԶ, 197:

² Г. Ф. Чурсин, Культ воды у кавказских народов. Бюллетень КИАИ, 1928, № 4, էջ 22:

³ Նույն տեղում, էջ 22—23:

⁴ Գ. Սրգանձտյան, Գրոց ու Բրոց, էջ 97—98:

Աղբյուրները Հայաստանում պաշտվում էին գրեթե ամենուրեք: Դրանք հայտնի էին որպես հիվանդաբույժներ, որպես մուրազատուններ: Բայց կային նրանց մեջ նաև շարը մարմնավորողներ, որոնցից առանձնապես խուսափում էին գիշերները:¹ Նույննենք տեսնում նաև վրացիների մեջ:²

Գանձակի Միրզիկ գյուղում «Խաչ-աղբյուրը» հավատալիքների համաձայն բուժում էր մկնատամ հիվանդությունը. դրա համար հիվանդ երեխաններին լողացնում էին նրա զրի մեջ և մոմեր էին վառում: Նույնն էին կատարում նաև «Թոսի-աղբյուրում», հուսալով, թե սուրբ ջողով կառողջացնի քոստներին: Բանանց գյուղի սարերում գտնվող Պագերի (համբույրների) աղբյուրի ջուրը նույն հավատալիքների համաձայն երիտասարդացնում և մարդուն սեր էր ներշնչում: Մի քանի այլ սուրբ աղբյուրների ջրերը փարատում էին վշտերը և հոգեկան հիվանդությունները, բուժում էին համրությունը, խլությունը և կուրությունը:³ Բորշալուի գավառի հայրնակ գյուղերումն էլ աղբյուրապաշտությունը տարածված էր: Ս. Նշանի վանքի մոտի «Թնդոց» կոշված աղբյուրում ամուլ կանայք արարողություն էին կատարում երեխա ունենալու նպատակով: Վարդաբլուզի Կաթնաղբյուրին ուստի այցելող կանայք կաթնառատություն էին խնդրում և զրից ստինքներին քսում: Այստեղ, երբ «բողոք» կոշված միջատը ծծում էր ցորենի հասկի հյութը, գյուղացիները Զարդախլու գավառի մի այրի միջից սրբազն աղբյուրից ամուրի տղամարդկանց ձեռքով ջուր էին բերում և քահանայի ձեռքով սրսկում արտերին: Լոռու այս ժողովուրդը ջուր էր բերում մինչև իսկ հեռավոր Մասիսի ս. Հակոբի աղբյուրից, մորեխի գեմ կովելու նպատակով:⁴ Անասուններին և մարդկանց առողջացնելու հուսով աղբյուրներին էին դիմում նաև նոր-Բայազետում: Ովհտագնաց սակավակաթ կանայք հատուկ զոհեր էին մատուցում, որպեսզի կաթնոտեին:⁵ Վասպուրականում քաղմաթիվ սուրբ աղբյուրներ կային, որոնք նույն ֆոնկցիաներն ունեին: Սրանց մեջ հիշատակության արժանի է «Զիավորի ճուռակած կոշված աղբյուրը, որը ավանդության համաձայն ծագել է Սասունցի Դավթի ձիու սմբակի հարվածից, իր ծարավության միջոցին: Այս-

¹ Գ. Ս ր վ ա ն ձ ա յ ա ն, Մասանա, 82:

² Г. Ф. Чурсин, Народные обряды и верования Кахетии, 35.

³ Ե. Լ ա լ ա յ ա ն, Գանձակի գավառ, Աչ, Զ, 331—332:

⁴ Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորշալուի գավառ, Աչ, Ժ, 182—183:

⁵ Ե. Լ ա լ ա յ ա ն, Նոր Բայազետի գավառ, Աչ, Ժ, 86—88:

տեղի աղբյուրներից սուրբ Համարվածները յուղառատ էին դարձնում կաթը, բուժում էին զանազան հիվանդություններ՝ և այլն:¹ Սուրբ Համարված աղբյուրներին ուխտի գնացող հայերը, քրդերը և այլազգինները հատուկ զոհեր էին մատուցում — թխված անալի հաց, խաշած ցորեն, զգեստների մասեր, աքաղաղներ, զարդեր և այլն,² որոնք ցուց են տալիս, թե այդ ջրերում աներկույթ արարածներ, ջրերի տերեր էին ապրում, որոնք կարող էին օգտակար և վնասակար լինել Ռէշադրավէ է, որ զոհերի մեջ հացը և ցորենը հատկանշում էին երկրագործական հավատալիքների և շրի ու սրա ոգիների կապը:

Հայկական հավատալիքների մեջ աղբյուր-ջուրը եղբայրն է կրակ քրոջ: Դազար Փարագեցին վկայում է, թե. «Ճշմարիտ է վկայութիւնն այն [և] զի եղբայր է ջուր կրակի՝ մեր ոչ միայն զի անցուցեալ չէ և վնասեալ զկրակն, այլ և մեծարեալ է զնա և բարի արարեալ»:³

«Ասում են, թե ջուրը և կրակը եղբայր և քույր են. մի անգամ եղբայր-ջուրը իշել է սարից, քույր-կրակը ասել է նրան. «Ենկ մի քիչ նստի տաքացի»: Եղբայր-ջուրն էլ պատասխանել է. «Պու էլ մի քիչ ինձանից խմիր հովացիրու»:⁴

Ռէշադրավէ է, որ այստեղ տեսնում ենք սկզբունքորեն և նախնապես ռմայր» ջրի իգական հատկանիշի անկում և էվոլուցիոն կարգով ռհայր» =այրական ջրի դաղափարի առաջացում: Այդ են ցուց տալիս նաև բազմաթիվ հեքիաթներում և առակներում հավաստվող նյութերը, որոնց մեջ որքան իգական, նույնքան և արական ոգիներ են ապրում: Այստեղ բավական ընդգծված է մայրական իշխանության անկման և հայրականի առաջացման իդեան: Այս նույն դաղափարն է նկատվում նաև լճերի ու ծովերի վերաբերյալ պաշտամունքներում:

Ջրերում ապրող Ալ-Ալք գլերը Բորշալուի և Ղազախի հայերի հավատալիքներում հայտնի էին իբրև իգական ոգիներ, ինչպես այլ տեղերում՝ ջրի աղջիկները, փերիղզիները կամ հուրի-փերիները: «Մասնա Ծոեր» էպոսից հայտնի է, որ, բացի իր ծովածին

¹ Ե. Լալայան, Վասպուրական, Աչ, ԻԵ, 34—38, Աչ, ԻԶ, 198 199:

² Ե. Լալայան, Նոր-Բայազետի գավառ. Աչ, ԺԷ, 87, Նույնի՝ Վարանդա, Աչ, Բ. 196, Նույնի՝ Վասպուրական, Աչ, ԻԵ, 34—35:

³ Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 78:

⁴ Ե. Լալայան, Գանձակի գավառ, Աչ, Զ, 332:

իգական հերոսներից, Սանասարն ու Բաղդասարը և այլ հերոսներ նույնպես ծովածին են: Այսպիսի էվլուցիան հայտնի է կովկասյան մի շարք ժողովուրդների: Հյուսիսային կովկասի թուրքերի մեջ գետային ջրերում ապրում էին «զրի մայրերը» (=սու-անասի), իսկ զարափափախսների մեջ «զրի մարդիկ» (=սու-առամ), իրենց ընտանիքներով՝ կանանցով և երեխաներով:¹

Զրային աստվածության իդեական հատկանիշի անկման, այսինքն մատրիարխատի անէացման և զրային արական աստվածության գոյացման, այսինքն պատրիարխատական կարգերի սկզբնավորման էվլուցիայի լավագույն օրինակ կարելի է համարել Վահագնի ծնունդը ծիրանի ծովից: Արդեն հասուն պատանի աստված Վահագնի հանդես գալու մեջ շեշտված է նրա «բոց մորուսը» իբրև առնական հատկանիշ: Վահագնը ծիսի-կրակի մեջ մաքրվում, նոր որակ է ստանում: Իսկ կրակը ավանդությունների մեջ այն միջոցն էր համարվում, որում երիտասարդանում էին զառամյալները:

Իբրև ծովի—զրի արական աստվածություն, հայկական ժողովրդական էպոսի զրային հերոսների հետ կարելի է համեմատել ուրարտական Սովինինա (=Տս-ի-պի-նա-ս-ե) զրային-ծովային աստծուն,² որը հավանորեն հայկական-տոհմատիրական կարգերի ժամանակ սեռափոխված աստվածություն էր ուրարտական պանթեոնում:



Հստ ժողովրդական կոսմոգոնիկ պատկերացումների, երկինքը յոթշերտանի անսահման տարածություն է: Առաջին՝ մեզ երեվացող շերտը ամպայինն է, իսկ մյուաները՝ զրայինը: Երկինակամարդից վերև տեղավորված է աստծու գահը,³ երկինքն, ըստ այդ պատկերացումների, մի ժամանակ շատ մոտ է եղել երկրին, բայց մի կնոք հանցանքով հեռացել է և անիծել մարդկանց: Նա երգեմնի ամբողջապես հասկապատ ցորենի ցողունի վրա թողել է միայն մի հասկ ցորեն:⁴

¹ Г. Ф. Чурсин, Культ воды у кавказских народов. Бюллетень КИАИ, № 4. 1928. Էջ 22:

² Б. Б. Пиотровский, Урарту..., Էջ 280:

³ Ե. Լալայան, Զագախք, Թիֆլիս, 1897, Էջ 236, Բորչալուկ գավառ, Աչ, Ժ., 189, Նոր-Բայազետի գավառ, Աչ, Ժէ, 94:

⁴ Ե. Լալայան, Գանձակի Գավառ, Աչ, Զ, 344:

Նրկնքի առաջին շերտը, այսինքն ամպային մասը համեմատված են սունկերի, բամբակի քոլաների և տիկերի հետ, որոնք իբրև թե իշնում են ծովերի վրա, զուր են խմում և բարձրանում վեր: Այստեղից են իշնում անձրկի կաթիլները:¹

Ամպրոպը շատ գավառներում կապված է Եղիա Մարգարեի անվան հետ։ Ավանդություններն ասում են, թե երբ Եղիա Մարգարեն կառքով գուրս է գալիս երկնքում զրուսնելու, ձիերը տրոփյուն են բարձրացնում։ Տեղ-տեղ այն կապվում է ջրհեղեղի պատմության հետ,² իսկ համշհնցի հայերի մեջ «ամպորոտը» աստծու եղների բառացի ձայնն էր նշանակում, որոնք կրիվ էին անում երկնքում։³

Հավատալիքների մեջ ամպրոպի առաջին ձայնը կապված է հողաբերքի՝ այդ տարվա հաջող կամ անհաջող լինելու հետ։ Փետրվարյան որոտը սակավաբերքի և մարտյան որոտը առատ բերքի նշան էր համարվում։⁴ Առաջին որոտով որոշվում էին մարդկանց տարեկան հաջողությունները և առողջության հարցերը։ Փողովուրդը բազմապիսի գուշակությունների ձևեր էր պահպանել, կապված որոտի այդ առաջին ձայնի հետ։⁵

Բուն ժողովրդական հավատալիքները խառնված հեթանոսական պատկերացումների հետ, կայծակը ներկայացնում են իբրև նղիա Մարգարեի գավազանի կրակը։ Ախալքալաքում կայծակը համարվում էր իբրև «ասսու կրակ», որը պատկերացվում էր շիկացած երկաթի ձեռքով։ Ավանդությունն ասում է, թե նրանից պատրաստված թուրք ահավոր ուժ է ունենում։ Կայծակը երկնքի տերերի ցաման արտահայտությունն էր համարվում, որով պատրժվում էին երկրային հանգագործները։⁶

Իբրև երկնային տերերի ցասման արդյունք են դիտված նաև

¹ Ե. Լալաջյան, Նոր-Բայազետի գավառ, ԱՀ, ԺԷ, 95—96, նույնի՛ Զայտակը, էջ 238:

² b. *L* *m* *l* *m* *j* *m* *n*, *R* *o* *p* *y* *w* *l* *p* *u* *b*, *q* *w* *f* *m* *a*, *U* *z*, *d*, 200.

³ Հ. Մուրադյան, Համբենցի հայեր, ԱՀ, 2, 114:

4 b. Լալայան, Բորչալուի գավառ, ԱՀ, Ժ. 200:

5 3. *Մուբադյան*, Համզենցի հայեր, Աչ, Զ. 114, ե. Շահ աղ զիզ—
նոր-նախիջևանը և նոր-նախիջևանցիք, Աչ, Թ. 48, ԲԿՆ և Բուլանըխ, Աչ,
Զ. 35, ե. Լաւագան, Բռուաւուկ պահառ, Աչ, Ժ. 200:

⁶ Տիգրան Նավասարդյան, Հայոց ժողովրդական հեքիաթներ, էպիպը, Թիգլիս, 1891, էջ 33, Եւ Լալայան—Նոր-Բայազդ, գավառ, Աչ, Ժէ, 96, Տեսոն Ծովհաննու Մանգակունւոյ հայոց հայրապետի ճառք, Վենետիկ, 1860, էջ 158:

երաշտն ու կարկուտը։ Հողաբերքի կապակցությամբ մշակված նախնական և հեթանոսական կրոնական պատկերացումներում այս երեսութիւններն առանձնապես համարված են «երկնային պատուհասներ», իբրև պատիժներ։ Հետաքրքրության արժանի է այն համոզմունքը, թե ամպային չար հրեշի հետ հարաբերության մեջ մտնելով, կախարդները կապում էին երկինքը։ Այդ կապանքը կատարում էին հեթանոս քուրմերին փոխարինող հայ կախարդները օձի արյունով, իշի գանգի վրա գրած դյութանքներով, իշի անտեսանելի մարմին քանդակելով և այլն։ Որոշ տեղերում խմորից երեխան էին քանդակում և օրորելով՝ երկինքը կապում։ Քրիստոնեական կրոնի մեջ էլ այդ նույն հավատքը կապվում էր մոնոթեիստական աշխարհը մբռնման հետ, որի մասին մեր մատենագիրները որոշ տեղեկություններ են հավաստում։

Քասակարգային շերտավորման ու շահագործման ռեալ կյանքի մի բնորոշ գիծ՝ ենք տեսնում գեղջկական հավատալիքների մեջ, որոնց համոզմամբ երկինքը կապել տվողները հարուատ հացավաճառ գյուղացիներն են եղել, որպեսզի երաշտի պայմաններում հարստանալ կարողանային։¹

Կարկտի պատուհասիլ դերը նույնպես վերագրվում էր Եղիա Մարգարեին։ Այդ պատճառով լոռեցիները մի շարք մագիկ միջոցների թվում դիմում էին նախ ս. Սարգսին, ապա իբրև բողոք Եղիայի դեմ՝ գովիտանի խոփին։ Կարկտի տակ դրված խոփն իբրև թե ասում էր, ովարել եմ, տանջվել, ինչի՞ Եղիա Մարգարեն փշացնում է իմ աշխատանքը։²

Զկարողանալով բացահայտել «երկնային պատուհասների» բնական պատճառները, ժողովուրդը կարկտահարության առաջն առնելու, մանավանդ երաշտը վերացնելու համար մինչև 20-րդ դարի սկզբները հասարակական հացկերութիւններ էր կազմակերպում, ժողովրդից հանգանակած գումարով գնված զոհի մսով։ Սրբավայրերը գնալը կատարվում էր թափորներով։ Լոռիում մի հատուկ կարկտաքար կար Կարկտի-հայր, կամ Տոլու-քար անունով, որին դիմում էին զոհերով։ Թալինի շրջանում երաշտը վե-

¹ Սը զ ա ն ձ տ յ ա ն, Մանանա, էջ 116, չով. Մալխանյան—հայ գեղջուկի ալբոմը, Աչ, Գ, 363, Ե. Լալայան—Նոր-Բայազեակ գավառ, Աչ, Ժի, 97, Աղ. Մխիթարյան—Փշանք Շերտակի ամբարներից, ԷԱԺ, Ա. 201, Յովհան Մամիկոնեան—Պատմութիւն Ցարօնոյ, Երևան, 1941, էջ 157, Աղաթանգեղեայ Պատմութիւն, Թէֆլիս, 1882, էջ 315—316:

² Ե. Լալայան, Բորչալուի գավառ, Աչ, Ժ, 203:

րացնելու համար դիմում էին «Դորտաքար»-ին և զոհեր էին մատուցում։ Հարավային Հայաստանում երկրագործության վնասաբեր բալոր երկույթները կանխելու և պատուհասիչ հրեշտակի բարկությունն իջեցնելու համար ցասման խաշեր էին կանգնեցնում գյուղերի ու քաղաքների մերձականերում։ Կազմակերպվող զոհաբերության հանդեսներում և հասարակական հացկերույթներում կատարվում էին հեթանոսական և քրիստոնեական ծիսական արարողություններ։ Արվանձտյանի նկարագրությամբ՝ զոհերը զարդարվում էին շուրջառներով և մոմեղեններով։

Կարկուտը դադարեցնելու համար կային հարյուրավոր մագիկ ձևեր։ Որոշ տեղերում կային նմանապես կարկտի կիրակիներ, սկսած զատկից մինչև Եղիա Մարգարեի տոնի երկուշաբթի օրերը։ Ս. Թադեոսի տոնին նույնպես մի օր կարկտի կիրակի էին պահում։ Եիրակում և Արարատյան դաշտում խոտհնձի պաս կար, Եղիական պաս անունով և այլն, և այլն։ Ազգագրական այս տեղեկությունները որոշ չափով համընկնում են մեր մատենագիրների տեղեկություններին։¹

Հայկական կոսմոգոնիական պատկերացումները, ինչպես ներկնային պատուհասների մասին ունեցած այս հակիրճ տեղեկությունները խոր հնության կնիք են կրում։ Դրանք համընկնում են արտադրողական ուժերի այն աստիճանին, երբ երկրագործության զարգացումը պահանջ էր զգում աստղաբաշխությանը, որը «Հենց տարվա եղանակների համար—բացարձակ անհրաժեշտություն է թե խաչնարած և թե երկրագործ ժողովուրդների համար»² Դրանց մեջ կան նաև քրիստոնեական կրոնի դոգմաների կնիքները, որոնցից գլխավորը թերևս կարելի լիներ համարել Եղիա Մարգարեի անունը, որի պաշտոնները համապատասխանում են հեթանոսության Վահագն Վիշապաքաղ աստծու պաշտոններին։

Մի կողմից մագիայի և մյուս կողմից որոշ քարերի նկատմամբ ծագած հավատալիքների ու հայկական «շամանիզմի» կրոնական իդեոլոգիաների ամբողջացում ենք տեսնում երաշտն

¹ Ե. Լալայան, Գանձակի գավառ, ԱՀ, Զ, 348։ Հ. Մուրադյան, Համշեսի հայեր, ԱՀ, Զ, 115։ Գ. Սրվանձտյան, Քրոց ու բրոց, 1874, էջ 117—119։ Ե. Լալայան, Նոր-Բայազետի գավառ, ԱՀ, ԺԷ, 97։ Ազգաթանգիպեայ Պատմութիւն, 1882, էջ 315—316։ Տեսան Յովհաննու Մանդակունոյ ճառք, 1860, էջ 156—157։

² Ֆ. էնգելս, Բնության գիտեկտիկա, Երևան, 1936, էջ 63։

«արգելող» քարեղեն միջոցների մեջ։ Ավելորդ է կրկնել, որ որոշ քարերի մեջ այդ զորության առկայությունը վերագրվում էր նախապես իբրև նախնադարյան մարդկանց գործիքի։ Մեզ հետաքըրք րող շրջանի մեջ, այսինքն երկրագործության հետ կապված հավատալիքներում քարերի պաշտամունքն արդեն այլ ստադիալ զարգացման է հասել։ Քարն իբրև անձնավորված առարկա հայտնի էր դեռևս անիմիզմի շրջանից։ Հետագա շրջանում նրա մեջ մարմնավորվում է ոչ թե սոսկ հոգին, այլև թափառող ոգին, իսկ սրա զարգացումով քարը դառնում է զոռոմորֆիզացիայի ու անտրոպոմորֆիզացիայի ենթարկված աստվածության արձանը։ Վերջինիս համար իբրև օրինակ կարող է ծառայել Թալինի Գորտագարը, որի անարվեստ լինելը վկայում է նրա արխայիզմի մասին։ Արդյոք դա նախապես գորտաքա՞՞ր է կոչվել, թե՞ ոչ, դժվար է ասել։

Բայց որ նա կապված է եղել գորտի՝ իբրև ուսելի կենդանու—տոտեմի անվան հետ, կասկած չունենք։ Քարի և կենդանիների (=գորտի և գորտագարի) պաշտամունքները պետք է որ ծագեին միաժամանակ, եթե ոչ պալեոլիթի, գոնե նեոլիթի զարգացման շրջանում։

Իբրև «Վիշապներին» նախորդող բնարձան, Գորտագարն ունի իր բազմազան նմանակները, որոնք նախնական անումները կորցրել են։ Երաշտարգել —անձրևաբեր այդ քարերը ակադ. Մ. Աբեղյանը ջրի աստվածության արձան կանգնեցնելու մնացորդ է համարում։¹ Մեր Գորտագարին նման է կոռու Դարկտի-հայր քարը, որի մեջ ընդգծելի է հայրական տոհմատիրական շրջանի ազգեցությունը։ Ագաթանգեղոսի մոտ ասված է, թե, «Փայտին ասացին՝ հայր իմ ես դու, և քարին ասացին՝ եթէ քո իսկ ծննալ է զմեզ»;² Այս ագաթանգեղոսյան ծնող քարը (=մայրը) ստադիալ առումով ճիշտ համընկնում է ջուր մայր, գորտ և նար մայր, հող մայր, հետևապես նաև գորտագար» ըմբռնմանը։ Ուստի հետագա զարգացում, մի նոր առում պետք է դիտել կոռու Կարկտի-հայր արական ֆունկցիա ունեցող քարը։

Բայց միակողմանի կլիներ երաշտը վերացնող քարերը համարել սոսկական աստվածությունների արձանները, երբ հայ ազ-

¹ Պրոֆ. դ-ր Մ. Աբեղյան, «Վիշապներ»..., Երևան, 1941, էջ 89։

² Ագաթանգեղոսի պատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 337։

գագրությանը հայտնի է հայկական տիպի շամանիզմը (=մոգություն, քրմություն): Այս առումով այն բոլոր քարերը, որոնք ծավալով շատ փոքր են և ունեն մոգական զորություն, հատկանշում են հեթանոսական շրջանին նախորդող էտապների մագիայի կուլտային էությունը: Դրանք, ինչպես և մոգերը կամ քրմերը, մարդու և աստվածությունների միջև միջնորդներ են, որոնք կարող են աշխարհը ոշինելը և ոկործանելը: Սրանց մեջ առավելապես ընդգծված են ստրկատիրական կարգերի — շահագործող և շահագործվող դասակարգերի իրարամերժ գաղափարները: Համեմատել, օրինակ, երկինքը կապող հայ կախարդները, որոնց միջոցները մանր քարերից զատ, հանդիսանում էին՝ խմորից պատրաստվող երեխայի արձանը, իշու գանգը կամ երևակայական իշու արձանը և այլն: Քուրմ > կախարդները երկինքը կապում էին հարուատների շահերի համար: Գրեթե նույնն ենք գտնում նաև սիրիոյան և այլ ժողովուրդների մեջ: Զինական կառավարող օրգանները մի ժամանակ անտանելի ծեծով էին պատժում այն մոլլաներին, որոնք համարձակվում էին հաճախ խնդրել անձրեկի աստծուն, որ նա անձրեկ տար, որովհետև աստվածը հորդառատ անձրեկի միջոցով ավերում էր ցանքերը,¹ Արևմտյան Զինաստանի թուրքերի մեջ, սկսած 7-րդ դարից մինչև վերջերս, շամանական մի քարեար, որը ջուրը գցելով անձրեկ էին ակնկալում:² Քարը «Յաղա» էր կոչվում և ունենում էր սպիտակ, կանաչ, կապուտ, դեղին, մարմնագույն և մուգ գույն: «Յաղա»-ն իբրև թե ծնվում էր մողեսի պոլցից կամ հանում էին եղան, ձիու, կովի և վարազի փորից,³ թեև այլ կենդանիների մեջ էլ էր ենթադրվում:

«Յաղա»-ն և՝ արական և՝ իգական սեռի է: Արականին հատուկ է արագորեն անձրեկ բերելու և այն ժամանակին դադարեցնելու ընդունակությունը, իսկ իգականին՝ հակառակը:⁴ Յակուտներն ունեն «յաղա»-ի նման մի քար, «սաստա» (сата) անունով, որը գտնվում է կովի, իշայծյամի (լօօչյ) և ձիու փորում: Այս քարին յակուտները այնքան մեծ զորություն են վերագրում, որ հավատում են, թե եթե այն ցույց տան արեգակին, նա «կմնոնի»,

¹ С. Е. Малов, Шаманский камень „Яда“ у тюрков Западного Китая. СЭ, 1947. № 1, էջ 153:

² Նույն տեղում, էջ 152:

³ Նույն տեղում, էջ 152:

⁴ Նույն տեղում, էջ 153:

այսինքն կկորցնի իր կախարդական ուժը:¹ Անձրևաբեր «յաղա»-ն որոշ տեղերում կապված է Աղամի և Գաբրիել հրեշտակապետի անվան հետ, արտահայտված զուրանում: Նրա գաղտնիքը ջուրը գցելու մեջ է, որից հետո միայն Գաբրիելը ներկայացնում է աստծուն և այլն:²

Երաշտի առաջն առնելու նպատակով մեր ցասման հացկերութիւնները նման են այն թուրք-թաթարական ցեղերի սովորություններին, որոնք գոյություն ունեն Հեռավոր Արևելքում: Գետափերում կազմակերպված ճաշկերույթը անձրևաբեր աստծու համար զոհ են համարում: Միսական արարողության ժամանակ նրանք ջուր են սրսկում միմյանց վրա, ինչպես մեզ մոտ՝ Վարդավառին և Նուրինը շրջեցնելիս: Այնտեղ ոչ միայն անձրևաբեր քարը, այլև ծեսը ինքն էլ «յադա» էր կոչվում:³ Համեմատել այս սովորությունը մեր Գորտաքարի հետ, որի վրա ջուր սրսկելով ու նրա մոտ մասսայական հացկերույթ կազմակերպելով անձրև էին ակնկալում: Գորտի վրա ջուր սրսկելու միջոցով անձրև ակնկալելու սովորությունը, ինչպես կտեսնենք հետո, սովորական էր հայերին և մի շարք ժողովուրդների: Համեմատել ույգուրների նման սովորությունը, կապված գորտի հետ:⁴

Երաշտի արհավիրքներով հարուստ Հայաստանի նախաքնիկների ոգեշնչած քարերը ոչ միայն անձրևաբեր են և երաշտարգել, այլև որդեծին, բերքածին, բուժի և այլն: Այդ պատճառով էլ հետաքրքրական է, որ քարը ստալիս է», «վնասում է», «օգնում է», ուրեմն կենդանի է: Նրա մեջ «արյուն կա» (Ախալքալաք):

Վարանդայի Գիջատ ովհտավայրի ծակ քարի անցքից ջուր լցնելով և մոմեր վառելով ժողովուրդն անձրև էր սրերում: Նույն տեղի Թաղավարդ գյուղի անձրևաբեր քարի վրա ջուր էին սրսսկում և կաթնաճաշ եփում, բաժանում: Իսկ Դոնավուզի մի քարը ոչ միայն անձրևաբեր էր, այլև երկարատև անձրևը դադարեցնող, երբ նրա տակ կրակ էր արվում:⁵

Դրեթե նույն բովանդակության մի քար է ցուց տրվում Վրաստանում:⁶ Սամոանցիների մի գյուղում մի ժամանակ մի քար էին

¹ С. Е. Малов, Шаманский камень..., էջ 153:

² Նույն տեղում, էջ 154—155:

³ Նույն տեղում, էջ 151:

⁴ Նույն տեղում, էջ 153—154:

⁵ Ե. Հալայան, Վարանդա, Ահ, Բ. 191—192:

⁶ Լ. Մելիքսեթիկ, Նուրին—Նազարեի երգի բանալին. ԳԺ, էջ

պահում, որը համարվում էր անձրևաբեր աստծու անձնավորումը։ Երաշտի ժամանակ այդ աստծու քուրմերը յուրահատուկ արարողություն էին կատարում քարը զրի մեջ սուզելու և անձրև բերելու համար։¹

Երաշտի պայմաններում վերոհիշյալ բոլոր միջոցները անձրև առաջացնելու նպատակով, առաջին հերթին կապվում են մագիայի հետ։ Կրոնական այս սիստեմը, որը բաժանվում է մի քանի ճյուղերի (=վարակիչ մագիա, նմանողական մագիա, անձրևային մագիա և այլն), լայն տարածում է ունեցել հայկական հավատալիքների մեջ։ Անսահման խոր հնություն ունեցող այս կրոնական ըմբռնման համաձայն կարելի է մասով որոշել ամբողջը — ընդհանուրը։ Մոգական քարերի վրա մոգական գործողություն կատարելով (=ջուր սրսկելով) կարելի է անձրև առաջացնել. բնությունն այդ պարագայում իր անձրևային աստծու միջոցով նման գործողություն կկատարի։ Այստեղ ակնհայտնի է նմանով նմանն առաջացնելու ըմբռնումը։

Հետաքրքրության արժանի է կանանց ձեռքով չորացած գետերի հունը վարելու գործողությունը, որը կատարվում էր երկարատև և ավերիչ երաշտի տարիներին։ Նոր-Բայազետում չորսհինգ այրի կանայք լծվում էին արորին, ու տղամարդու շորեր հագած մի ուրիշ կին մածկալի առաջնորդությամբ վարում էին գետի հունը։² Զանգեզուրում և Գանձակում արորին էին լծվում երկու կին, մի երրորդը տղամարդու զգեստներ հագած, մի մեծ գլխարկ գլխին ծածկած, իբրև հոտաղ, քշում էր կանանց և զրի ընթացքին հակառակ՝ վարում գետի հունը։³ Անձրև բերելու այս սովորությունը հայտնի էր նաև փշավներին ու խևսուրներին,⁴ Կախեթի վրացիներին, արխազներին և այլն։⁵

Ակադեմիկոս Մանուկ Արեղյանը գտնում էր, որ այդ սովորությունը «զրի աստվածության պաշտամունքի մի մնացորդ էր», ուր «այդ վարն անում էին արորին լծված աղջիկներն ու կանայք,

¹ Փրզեր, Золотая ветвь, вып I, § 95: Համեմատել աֆրիկյան նման մի սովորությունը. Г. Шурц, История первобытной культуры, выпуск II, Москва, 1923, § 670—671.

² Ե. Լալայան, Նոր-Բայազետի գավառ, ԱՀ, ԺԷ, 96:

³ Ե. Լալայան, Գանձակի գավառ, ԱՀ, Զ, 347:

⁴ Փրզեր, Золотая ветвь, вып I, § 88—89:

⁵ Г. Ф. Чурсин, Магия в борьбе с засухой у кавказских народов. Бюллетень КИАИ, № 6, 1930 г., § 17:

ուրիշ ժողովուրդների մեջ՝ մերկ, որպեսզի, ինչպես բացատրում են, գրավեն անձրևաբեր աստծուն»:¹ Բայց այս գործողությունների մեջ միաժամանակ թաքնված էին այլ հանգամանքներ:



Նկ. 13. Կանայք վարում են չորացած գետի հունը, որպեսզի անձրև դաւ

Կանանց ձեռքով վար անելը, ամենից առաջ սիմվոլիզացիայի էր ենթարկում մայրական տոհմային կարգերի երրեմնի ունեցած իշխանությունը երկրագործության բնագավառում։ Կանանց ձեռքով արորին դիմելը մատրիարխատին հատուկ անձրևաբեր-ջրային մայր աստվածուհուն՝ Նարին դիմելն էր ցուց տալու Խոնավության այդ մեծ աստվածուհին կանացի պաշտամունքներում տակավին պահում էր իր ուժը, թեև դա հետնագույն շրջանում սեռափոխված էր (=Ակլատիզ)։ Թվում է, թե արական մի այլ աստվածության տարիածուն լինելով, Նարը կամ ջրային իգական ոգին հեղտասիրական պահանջ էր ներկայացնում, որպեսզի նրան ներկայանային արական սեռին հատուկ արտաքինով, ինչպես որ հակառակը գտնում են ուրիշները։

Արական քնույթ ստացած ջրային-անձրևաբեր աստծուն նվիրվելու գործողություն աֆետք է համարել համբարձման տոնին (չորեքաբթի, լույս հինգշաբթի գիշերը) աղջիկների գաղտագողի լողանալը գետերում կամ աղբյուրներում, որով իբր երիտասարդները մուրազի կհասնեն, տարվա բերքը առատ կլինի և այլն։ Համնմատել Աստղիկ դիցուհուն, որը նույնպես լոգանք էր ընդունում գիշերները² (=իր տարիածու Վահագնի՝ համար)։

¹ ՊըՓ. դ-ր Մ. Արեգյան, «Վիշապներ»... էջ 88.

² Գ. Սրվանձայան, Գրոց ու բրոց, էջ 97։

Անձրևաբերության նպատակով կանանց՝ արորով վարելը ուներ մաղիկ նշանակություն։ Մեզ հայտնի են ջրային սրբերին դիմելու միջոցով աղբյուրներ բխեցնելը ցամաք վայրերում՝ առակներից, հերթաթներից և հավատալիքներից, սրբազն դավազաների հարվածով։

Հեթանոսական սրբազն և հրաշագործ դավազանների դերը այստեղ կատարում են երկրագործական գործիքներն ու աշխատող անձնակազմը, որոնք գետի չորացած հունը փորելով ջուր են ակնկալում (=անձրև են բերում)։

Այսուհետեւ մենք կարծում ենք, որ սրբազն արորով գետի հունը վարելը կարող է նշանակել նաև պայքար ջրային այն հրեշների—վիշապների դեմ, որոնք ընդունակ են կու տալու ողջ ջուրը և արգելելու ոռոգումը։

Ամպային չար հրեշի՝ ուշապի դեմ (երբ նա երևում էր երկրներում հողմապտույտի ձևով) մի ժամանակ աղմուկ-աղաղակ էին բարձրացնում, պղնձյա ամաններն էին ծեծում, հրացան էին արձակում Ախալքալաքի դյուլիքրում։

Նման հրեշներ էին հայկական ապուք-ները, որոնց վերին մասը գեղադեմ կնոջ էր նման, իսկ ստորինը՝ արծվային ճանկերի,¹ և նհանգ-ները կամ նահանկ-ները (ձիագետի կամ կոկորդիլոս)։² Ջրի շար ոգիները վրացիների մեջ էլ ունեն նույն բռվանդակությունը։ Ջրում խեղդվածին Կախեթի վրացիները մի ժամանակ չէին կարողանում հանել, մինչև որ այծ չզոհեին և զրին շասեին։ «Ահա քեզ այծը, ազատիր խեղդվածին»։³ Ջրային այդօրինակ հրեշների պաշտամունքի մնացորդ էր Ղազախում մեծ պասի երկրորդ օրը ջրի կիրակի ունենալը։⁴

Երաշտի առաջն առնելու մոգական գործողություն էր Սըրվանձտյանի մի հաղորդումը, որտեղ հերոսները կանայք լինելով, մենք այն համեմատում ենք գետի հունը վարողների գործողության հետ։

Երաշտի ժամանակ «Ըլիբընկի գյուղացիք իրենց կանայք կսպառազինեն կուղարկեն Խուշավա գյուղին վրա, և այն գյուղի կանայքն ալ սպառազեն ասոնց դեմ կելլեն։ Երկու կողմեն հրացաններ կը պարպվին, վերջապես Ըլիբընկցի կանայք կը հաջողին

¹ Աւել 2 ան, չին հավատք, 1895, էջ 61—62։

² Աւել 2 ան, չին հավատք, 1895, էջ 62։

³ Г. Ф. Чурсин. Народные обычай и верования Кахетии. էջ 88։

⁴ Քաջբերունիք, հայկական սովորություններ, Աչ, է-Ը 123։

ուշաբ մը ավարել, և կը բերեն զոհել, գլուխը կտրելով մեծ հանդիսով կը տանեն կը ձգեն գետը, որ անձրկ գա»:¹

Այս կեղծ պատերազմը դրսեռում է, ըստ երևույթին, տարբեր ցեղախմբերի այն նախըմբնումը, որի համաձայն նրանցից մեկն իր աստվածության միջոցով կապանք է զնում երկնային բարիքի վրա։ Նման պատերազմումներ կան անզարգացած մի շարք ժողովորդների մեջ այն համոզմամբ, թե իբր իրենց անհաջողությունները, դժբախտ դեպքերը, մահը և այլն, հետևանք են հարկան, հակառակորդ ցեղերի թշնամության։ Իսկ «ավարվող» և զոհվող կենդանին եթե մի կողմից հիշեցնում է որսորդական և անասնապահական շրջանների հատուկ տոտեմիզմի տարրերի մնացուկները, մյուս կողմից այն ցույց է տալիս ջրային տարբերքին զոհաբերություն անելու հեթանոսական սովորությունը, «Պատերազմի» հերոսուհիները մատնում են պաշտամունքի մոգական արարողության մատրիարքալ էությունը։

Թե «վարը» և թե «պատերազմը» հայկական հնագույն պատերազմումների մեջ գեղեցիկ օրինակներ են արտադրական մագիայի գծով, որոնք մեզ են հասել դեռևս բարբարոսության ստորին աստիճանից։ Այս առումով էլ սպասածից ավելի կարևորություն են ներկայացնում այդ նյութերը, իբրև տեղային հատկանիշներ կրողներ։

Մյուս կողմից՝ այդ գործողությունները, հավանորեն, արական աստվածությունների անկարության պայմանների հետևանքով ջրային տարբերքի իգական աստվածություններին դիմելն են հատկանշում։

Օդերևութաբանական—արտադրական—անձրևային մագիայի մի շարք ձևեր են արտահայտում այն սովորույթները, որոնք կապված են մեր նուրին կոչված խրտվիլակի հետ։

Նուրինի սեռը և կերպարը

Անձրևաբեր նուրինի տարբեր վարիանտները գրի են առնվել 19—20-րդ դարերի ընթացքում, սկսած 1870-ական թվականներից։ Առաջինը գրի է առել Գ. Սրվանձտյանը, թեև ծիսական երգը բաց է թողելւ²

¹ Գ. Սրվանձտյան, Մանանա, էջ 116։

² Նույն աեղում, էջ 113։

Նուրինը պատրաստվում էր՝ Ախալքալաքում՝ մի ձողի վրա ամրացրած ցախավելով, որին հագնում էին կանացի շորեր և գլխին քող էին գցում: Ցախավելի վերին ծայրին փայտե թևեր էին պատրաստում:¹ Նոր-Բայազետում նույնպես ցախավելով էին պատրաստում, Ախալքալաքի ձևի, բայց գլխին հագնում էին տղամարդու գլխարկ (փափախ):² Մի այլ տեղ Նուրինը ներկայացնում էր մեծ խաչայտը, որին սպիտակ երկար շորեր էին հագնում:³ Խարբերդում, Վանում և այլուր այն պատրաստվում էր (փոքր) խաչաձև փայտից, դարձյալ շորեր հագնելով:⁴ Սըրվանձյանի նկարագրածով՝ փայտի վրա լաթեր էին փաթաթում և մարդու ձև էին տալիս:⁵ Շիրակում Նուրինը պատրաստում էին ավելով, վրան փալասներ փաթաթելով:⁶

Ինչպես տեսնում ենք, Նուրինի գլխավոր բաղկացուցիչ մասերն են՝ ավել-ցախավելը և փայտը, մեծ մասամբ կանացի զգեստներով (տղամարդու զգեստով Շնուրին դեռևս մեզ հայտնի չէ): Անձրեաբեր տիկնիկների, նմանապես և կանաչով պատրաստված նման խրտվիլակների ձեւեր ենք տեսնում նաև այլոց մեջ, որը կապված է վեգետացիոն աստվածության պաշտամունքի հետ:

Իր արտաքին ձևի և անվան տեսակետից մեր Նուրինն ունի հետեւալ վարիանտները.

Խուճկուլու և Խուճկուլու՝ Խարբերդում,⁷ Խուճկուլու և Խուճկուլու՝ Վանում,⁸ Խուճկուրուրիկ, Խուճկուրուրա և Խուճկուրուրիկ՝ Նոր-Բայազետում և Շիրակում,⁹ Հուչկուրուրու՝ Ապարանում,¹⁰ Շոլի՝ Բորչալուում և Շարաբաղում,¹¹ Մամա-Զթթիկ՝ Արարկիրում,¹² Նազարեթ՝ Նոր-Նախիջևանում,¹³ Նուրին՝ Նոր-

¹ Ե. Լալայան, Զավախք, Էջ 247—248:

² Ե. Լալայան, Նոր-Բայազ. գավ., Աչ, ԺԷ, 96:

³ Նոր-Դար, 1893, № 67:

⁴ Գավառական բառարան, Էջ 489—490, Սա. Մալիայանց, Հայերեն բացարարական բառարան, հատ. Բ. 300:

⁵ Գ. Մրգանձտյան, Մանանա, 113:

⁶ Աղ. Միիթարյան, Փշրանքներ..., Էնֆ, Ա. 273:

⁷ Գավ. բառ., 489:

⁸ Խույն տեղում:

⁹ Լալայան, Նոր-Բայազետի գավ., Աչ, ԺԷ, 96: Գավ. բառարան, 489, Ամառունի-Բառ ու բան, 507 (Նուրինի տակ):

¹⁰ Իմ ձեռագիր ժողովածուում:

¹¹ Ե. Լալայան, Բորչալուի գավ., Աչ, Ժ, 202: Գավ. բառ., 729:

¹² Գավ. բառ., 816 (Նուրինի տակ):

¹³ Լ. Մելիքսենթ-Բակ, Նուրին-Նազարեթ երգի բանալին, ԳԺ, 104:

Նախիջևանում,¹ Նուրին՝ Արարատյան դաշտում,² Արագածոտ-
նում,³ Բորչալուում,⁴ Լոռիում,⁵ Ղարաբաղում,⁶ Կարսում և Շիրա-
կում,⁷ Ուրբաթեկին՝ Բարերդում,⁸ Զամշա-Խաթում⁹ Ախալցխա-
յում,⁹ Զիշի-Մամա՝ Ակնում և Արմաշում,¹⁰ Պուպլատիկին՝ Քղի-
ում,¹¹ Պուրպատիկ Ախալքալաքում,¹² Պորպատիկին՝ Ախալցխա-
յում և Շիրակում:¹³

Նկատելի է, որ «Նուրին» բառն առավելապես տարածված է
եղել Արևելյան Հայաստանի գավառներում, իսկ մյուսները՝ Արև-
մբտյան Հայաստանում: Ըստ Էության, «Նուրինը» կազմում է ա-
մենատարածվածը Հին Հայաստանում, որի բառային (ձևական)
կորուստը մի շարք գավառներում պետք է բացատրել նրան փո-
խարինող մակդիրներով, որպիսիք հատուկ էին նշանավոր աստ-
վածություններին մեծարելու համար: Մյուս կողմից, բաղմանուն
լինելը հայկական էթնոսի առանձին էլեմենտների՝ տոհմային
խմբերի առանձին, բայց նույն բովանդակության պաշտամունք-
ներն են:

Նուրին-Նար անունը իգական է: Իգական անձնանվան պարզ
տարրեր կան Մամա-Չթթիկ, Զամշա-Խաթուն, Զիշի-Մամա, Պուպ-
լատիկին—Պուրպատիկ—Պուրպատիկին անունների մեջ:

Նուրինի մի քանի վարիանտները՝ Խունձկուլու և այլն, բա-
ռարաններում բացատրված են իբրև թրջված, խխմած, տղկած:¹⁴
Մալխասյանը Խունձկուլուն նույնացնում է Ախելուծ—Ախուճի
հետ,¹⁵ որը մենք տրամաբանական ենք համարում, որովհետև այդ

¹ Լ. Մ ե լ ի ք ս ս թ - թ ե կ, Նուրին - Նազարեկի երգի բանալին, ԳԺ, 194:

² Ա մ ա տ ու ն ի, Բառ. ու բան, 507, Գավ. բառ., 816:

³ Պ ե ր ճ Պ ո ո շ յ ա ն, Սօս և Վարդիթեր, Երևան, 1897, էջ 97, 98, 93:

⁴ Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորչ. դավ., Աչ. ժ. 200:

⁵ Ա մ ա տ ու ն ի, Բառ. ու բան, 507:

⁶ Գավ. Բառարան, 816:

⁷ Ա դ. Մ ի թ ա ր յ ա ն, Փշրանքներ... էԱԺ, Ա. 273, 200:

⁸ Գավ. բառ., 816:

⁹ Հազորդեց Խսկուհի Ղաֆադարյանը:

¹⁰ Ն ո բ - Դ ա ր. 1893, № 67: Գավ. բառ, 880, Թեղիկի, Ամենուն տարե-
ցույցը, 1929, էջ 117:

¹¹ Գավ. բառ., 816, Մ ա լ ի ս ս յ ա ն ց, Հայերեն բացատ. բառ., Գ. 485:

¹² Ե. Լ ա լ ա յ ա ն, Զավախք, էջ 248:

¹³ Ա մ ա տ ու ն ի, Բառ. ու բան, 566, Գավ. բառ., 926: Մ ա լ ի ս ս յ ա ն ց—
Հայերեն բաց. բառ., Դ. 119:

¹⁴ Գավ. բառ., 489, Ա մ ա տ ու ն ի, Բառ. ու բան, 292: Մ ա լ ի ս ս յ ա ն ց—
Հայերեն բացատրական բառարան, Բ. 300:

¹⁵ Ս տ. Մ ա լ ի ս ս յ ա ն ց, Հայերեն բացատր. բառ., Բ. 301:

երկուսից առաջինն իգական և երկրորդն արդեն արականացած, միենույն՝ աստվածության տարբերագույն շրջանների անուններն են; Մ. Արեղյանը, սակայն, խործկություն է խործկությունը սկզբի մասի մեջ տեսնում է «իրծիկ» բառի արմատը՝ խործ, տիկնիկ նշանակությամբ, թեև էջմիածնի գավառում, Ապարանում, Խոյում, Ալաշկերտում, Վանում և այլուր «փորձիկ» նույն տիկնիկ—պաճուճապատանքն էր կոչվում: Իսկ խուշկություն համարում է պղափաղում:¹

Դատելով երգի սյուժեից իգական սեռի հատկանիշ ենք տեսնում նաև ճողիի մեջ (եղ բերեք վարսը քսենք):²

Ճողիի երգը նուրինի մյուա վարիանտներից տարբերվում է նրանով, որ այստեղ ծովն ընկած «ճողին»— այսինքն նույն ինքը տիկնիկը, դուրս բերելիս դադարեցնելու ծեսի ժամանակ կապվում էր հողի հետ, պահանջելով ցեխից պատրաստած բլիթներ (բլիթ բերեք ծոցը դնենք):³ Նրա հետ կապված է նաև կանաչը—խոտը, որից էլ, ըստ երևութին, ծագում է նրա անոնք: «Ճողակ»-ը Մուշում, Ալաշկերտում, Արագածոտնում, Շիրակում և այլուր բանջարների բողջա էր նշանակում:⁴ Արդյոք այս բառի կրճատումը չէ՝ «Ճողա»-ը: Արդյոք ճողը բառացի կանաչի փոնջ, կապոց չի՝ նշանակում, որովհետև նուրին—ճողին 19-րդ դարում ավելի կամ ցախալելի, իսկ նախապես՝ հավանորեն կանաչի պաճուճապատանք էր:

Իգական սեռի հատկանիշներ ունեն նուրինի Մամա-Զթթիկ, Զիշի-Մամա և Զամշա-Խաթուն անունները, ուր «Մամա»-ն տատ, մեծ մայր առումն ունի: Մամա-Զթթիկ անվան անանջատականներից վերջինը արդյոք գեղեցիկ չի՝ նշանակում (=Մայր-Գեղեցիկ), կամ չթթիկ, այսինքն «վրան գույն-գույն կետեր ունեցող, պիսակ, պուտ-պուտ»,⁵ որը գավառներում գեղեցիկ առում ունի:

¹ Պրոֆ. գ-ր Մ. Արեգյան, «Վեհապներ»..., էջ 90. Արշակ Աթայանի «Սալմաստ»-ում ասկած է «Խրծիքա-ները (տիկնիկներ—խաղալիք) գեղեցը սատանաներ են գառնում, իսկ ցերեկները նորից տիկնիկների են փոխարկվում» (էջ 145):

Ախալցխայում նուրինին նմանեցնելով թրջած-խմած մարդկանց «ճողի դդիք» են անվանում, որը հավանորեն աղերսվում է Բորչալուի ճողիին:

² Ե. Լալայան, Բորչալուի գավառ, ԱՀ, Ժ. 202:

³ Ե. Լալայան, Բորչալուի գավառ, ԱՀ, Ժ. 202:

⁴ Աղ. Միթթարյան, Փշրանք..., էնֆ, Ա. 277, Ամատունի, Բառ ու բան, 443:

⁵ Մարտիանոյան, Բացատր., բառ, 7, 22:

«Զիշի-Մամա»-ի մեջ «շիշի»-ն թեև միս է նշանակում,¹ բայց հավանորեն կապ ունի ռժիճի» բառի հետ, որը արևմտահայ որոշ հատվածների մեջ փոխ է առնված թուրքերենից (gig) գեղեցիկ նշանակությամբ: Շիճի—սիրուն, ճիճի-պիճի—սիրուն, զարդարված,

ճիճող—սիրուն, գեղեցիկ, շնորհալի, դարձյալ տաճկերեն նույն բառից է:² Պողաճյանի բառարանում «Ճիճի»-ն բացատրված է իբրև «խաղալիք, պաճուճապատանք, փողփողյալ, պաճուճյալ ինչ. փայլուն, պաղպաջուն»:³ Իսկ «Զամշա-Խաթուն»-ի մեջ՝ «Համշա» պարսկերեն չառչա, տաճկերեն ծեռչա, մեծ գդալ կամ շերեփ: Հարաբաղում «Համշիկ»-ը փայտյա փոքրիկ շերեփին էր կոշվում,⁴ և «Խաթուն» տիկին (=շերեփե-տիկին): Պարզ է, որ Նուրինի այս Փ. Խանչալլի գյուղի վարիանտ:

Արաբական պատանք սարքելու դեպքում, որպիսին մեզ հայտնի է այլ գավառներից էլ:

«Պուրպատիկինի» մեջ ակադ. Մ. Աբելյանը «պուրպա» բառը «պուրպեկ», «պուպրիկ» և «պուպուկ» ձևերով, տեսնում է տիկինիկ, համեմատելով գերմաներեն Բյորե, ֆրանսերեն բուրέ նույնահունչ բառերը⁵: Եվ իրոք, «պուպրիկ» Խարբերդում,⁶ «պուրպիկ», «պուպուկ», «պուպրիկ» Ախալքալաքում, Ռշտունիքում, Արարատյան դաշտում, Ռափանում և Լոռիում «տիկնիկ», պաճուճապատանք էր:⁷ «Ռուբաթեկին» անունը,— գրում է ակադ. Մ. Աբելյանը,— հավանորեն աղճատումն է «պուրպատիկին» բառի: «Պուրպատիկին» բառը, սակայն, կարող է և աղճատումն լինել

¹ Գավառ. բառ., 880:

² Գավ. բառ. 714 և Մալխասյանց, Բացատր. բառար., Գ., 210:

³ Հ. Հակովոսյան, Վ. Պողաճյան, Համառոտ բառարան տաճկերեն-հայերեն. ի Վիեննա, 1858, էջ 443:

⁴ Գավ. բառ., 875, Մալխասյանց, Բացատր. բառ., Գ. 9:

⁵ Մ. Աբելյան, «Վիշապներ»..., էջ 90:

⁶ Գավ. բառ., 926:

⁷ Ամատունի, Բառ ու բան, 566, 282, «Խմաճեկ»-ի տակ:



«բուրբատիկին» բառի, որ գավառական արտասանությամբ դարձած է «պուրպատիկին», ինչպես «բորբոք» բառը դարձել է «բուրբոք», գավառական արտասանությամբ՝ իսկապես «պուրպոք»: Բուրբատիկին բառի առաջին մասի «բորբ» արմատն է «բորբոք», «բորբել» բառերի: Բորբ տալ—գրգռել, բորբոքել»:¹

Նուրինի վարիանտների մեջ միայն «Նազարեթ»-ն է, որ արական անուն ունի (արդյոք կապ ունի՝ վրաց «Լազար»-ի հետ):²

Նուրինի ծիսական պրոցեսը

Երկարատև երաշտի ժամանակ Նուրինը ման ածող անձնակազմը կազմվում էր գլխավորապես դեռատի աղջիկներից և այրի կանանցից: Բացառիկ պայմաններում մասնակցում էին պառավ կանայք: Տղաներից կազմված անձնակազմ— ընդհանրապես ընդունելի չէր, բայց բացառություններ լինում էին: Տղաները սովորաբար ջուր սրսկելուն և օկատակելուան էին մասնակցում: Նրանք չարշարում էին թե՛ տիկնիկին և թե՛ աղջիկներին:

Անձնակազմը սովորաբար զգեստափոխվում, հասարակ, երկար շորեր էր հագնում: Շրջելիս նա կանգ էր առնում գյուղի յուրաքանչյուր տան բակում և երգում: Երգի մեջ տանտիրություց խնդրվում էր կաթնամթերք, ձու, ալյուր և այլ ուտելիքներ տալ, որոնց համար ուղեկցում էին մթերակիրներ հատուկ ամաններով: Սովորաբար շրջող անձնակազմին դիմավորում և սպասարկում էին գերդաստանի տանտիկինները, փոխադարձ խոսակցությամբ: Տան տերերը և երեխաները շրջող անձնակազմի վրա ջուր էին սրսկում: Անձնակազմը այդ չարշարանքը տանում էր անտրտունք:

Դատելով մեր կողմից 1947-ին կարսեցի Հերիքնազ Բրուտյանից գրի առած երգի սյուժեից, տանտիրութիները խոսքի փոխանակումը կատարում էին չափածո ձևով (մեզ հայտնի չեն այլ վարիանտներ, ուր այդ ձևը պահպանված լիներ): Հերիքնազի վարիանտը թեև աղճատված է, բայց արժե ներկայացնել իրեն ավելի հին ձև:

¹ Մ. Աբեղյան, «Վեշտապներք...», էջ 90-91:

² Լ. Մելիքսոնթեկ, Նուրին-Նազարեթ երգի բանալին, ԺՊ, էջ 192:

1. Անձնակազմը

Նուրին Նուրին էկել է,
 Շալե շապիկ հագել է,
 Կարմիր գոտիկ կապել է.
 Մեր Նուրինին փայ տվեք,
 Տաշտերով ալուր բերեք,
 Մաղերով ջուր բերեք,
 Մեր Նուրինին կշտացրեք,
 Ուտենք-խմենք, քեֆ անենք:

2. Տաճտիրունին

Մեշկերդ պինդ էղնի,
 Կամքերդ ամուր էղնի,
 Անձրես թեժ էղնի,
 Հացը առատ էղնի:

3. Անձնակազմը

Տաշտ ու մաղդ լիք էղնի,
 Քու հացդ առատ էղնի,
 Գերանդին չկարա կտրի:

Եղած վարիանտների մեջ լավագույններ կարելի է համարել նաև այն երկուսը, որոնցից մեկը «Նուրին»-ն է, որն անձրև հայցելիս էր երգվում-ասվում և մյուալ՝ «Ճոլի»-ն, որը հարատե անձրես կտրելու համար էր ասվում:¹

Նուրինի անձնակազմի պատշաճ նկարագրություն ունի Կարինի թղթակից-քանահավաք Հերապը, որը եղածների մեջ կլասիկը լինելով, ներկայացնում ենք անփոփոխ ձևով:

Հ. գյուղացիք² երաշտի ժամանակ Զիշի-Մամա են պատրաստում: «Գյուղի տասն-քսան պառավ կանաչք կը հավաքվեն միատեղ, և կընտրեն իրենց մեջին առողջ և դիմացկուն պառավ մը,

¹ Ե. Լալայան, Բորչալուի գավառ, Աչ. Ժ. 202, Մ. Աբեղյան, «Վեշտապներ», էջ 90:

² Բանահավաքը դյուղն ու գավառը ցույց չե տվել:

որն որ կը մերկացնեն և միայն միատակ շապիկով և ներքնաշուրպվ կը թողուն: Հետո ձեռքը մեծկակ խաչափայտ մը կուտան, որուն վրա ճերմակ շապիկ մը կը հադցնեն, բայց սա այնշափ երկայն պիտի ըլլա, որ խաչափայտի վրային իշնե, և զինքը բռնող Զիշի-Մամայն ալ ծածկե մինչև ոտքի կոճերը: Վերոհիշյալ տասն-քսան պառավ կանալք, որոնց մեկը թմրուկ է առած ձեռքը և շորս-հինգ պառավ ալ յուր օգնական քովերով կանգնած, մի ուրիշ քանի պառավ մի-երկու պարկ ունեն հացի համար, մի քանին մի պարկ աղի համար, մի քանին պարկ ձավարի համար և ուրիշ մեկ-երկուքն ալ մի պղնձե աման են բռնած յուղի համար: Իսկ անշափահաս տղայր և աղջկունք շար-շար հավաքված են անոնց շուրջը. մեր վեհափառ Զիշի-Մամայն յուր ծանր բանակով կը խաղա առաջ, կը թափառի դռնե ի դուռ, և կսկսի յուր բարձր մուրացկանությունը: Սակայն նա ինքը բոլորովին լուռ, ինչպես տեղացիք կը-սեն, անխոս պիտի մնա: Ըստ որում պատրաստված թմրկահար կանալք փոխանակ իրեն, թմրուկ հարկանելով իրենք նորին բարձրը ցանկությունը կը հայտնեն, խաղեր ըսելով հայերեն և թուրքերեն, ուղղակի այն տանտիկնո՞ց, որուն դուռը կանգներ են.

Զիշի-Մամայն ի՞նչ կուզե,
Երկնքեն ամպեր կուզե:
Զիշի-Մամայն ի՞նչ կուզե,
Աստըծու (յայ) անրջե (անձրե) կուզե....:

Զիշի-Մամայն նէ՞ իստէր,
Ալլահտան յաղմուր իստէր:
Զիշի-Մամայն նէ՞ իստէր,
Խաթունտան պուղուր իստէր:

Այսպես շուրանակելով կը հավաքեն յուղ, աղ, հաց և ձավար: Իսկ այն միջոցին, այսինքն ամեն տան դռան առաջ բարձր տեղերեն մեծամեծ ամաններով պաղ ջուրը կը թափեն խեղճ Զիշի-Մամայի գլուխն ի վայր, նա սոսկալի կերպով կը դողա խաչի տակը, բայց այնու հանդերձ ամենայն քաջությամբ կը դիմանան հեղեղի նման՝ մինչև իսկ փողոցը գլխուն թափած պաղ պաղ ջրերուն»:¹

Նույն Զիշի-Մամայի մի այլ նկարագրողը գրում է. Նորինի «... Մեկ գեղեցիկ տարբերական է Ակնա և Արմաղի մեջ տեղի

¹ Նոր-Դար, 1893, № 67:

ունեցածը. տղեկ մը կամ աղջնակ մը մորե-մերկ ընելով՝ կըզգեստավորեն հին պատկերով, ցնցոտիներով, գլխուն ալ մաղ մը կանցնեն. այդ վիճակին մեջ՝ ան կը կոչվի Զիշի-Մամա (շրջեր-Մամա=խիում խաթուն), որուն կը ընկերանա մանշերու խումբ մը ու կը շրջե տունե տուն, տաճկեվոր հատով երգ մը շրջումքին...»:¹

Ընդհանուր սովորությամբ շրջող անձնակազմի հավաքած մթերքների մի մասով մատաղացու էին գնում և եփում ու հասարակական հացկերույթ էին կազմակերպում: Նյութական մասը, ըստ Հերապի տվյալների, հսկում էր Զիշի-Մամայի դերակատարը, երեցփոխանի հետ: Քահանան արարողություն էր կատարում:

Հացկերույթին մասնակցում էին դեռատի աղջիկները, այրի կանայք, բայց տեղ-տեղ բացառություններ լինում էին, ուր մասնակցում էին նաև արբունքի հասած աղջիկները, հարսները և տղամարդիկ: Բոլոր տեղերում հացկերույթը,— լիներ այն մեծ թե փոքր մասշտաբի,— կազմակերպվում էր նույն ձևով: Տեղ-տեղ էլ հացկերույթին մասնակցում էին եկեղեցու գործակատարները, ծեսին քրիստոնեական գումավորում տալու նպատակով:

Նուրին < Նար աստվածամի

Նկարագրի և ազգագրական այլ տվյալների համաձայն «Նուրին» խրտվիլակը «անձրևային» մագիայի ֆունկցիայից զատ ունի և այլ հատկանիշ: Անվանական առումով դա նույն «Նար»-ն է, վերջինիս արձանը:

Պրոֆ. Գ. Ղափանցյանը պրոբլեմատիկ համարելով «Նուրին»-ի և «Նար»-ի նույնության հարցը, գրում է, թե հավանութին «Նուրին» բառը «Նար» բառի ածանցությունն է լինելու,² թեև այդ պարագայում պետք էր սպասել «Նարին» և ոչ «Նուրին»: Ապա «առածայնավորի փոխարեն «ուռա-ի հանդես գալը գիտնականը բացատրում է երգի մեջ «Նուրին» բառի ազդեցությամբ (=Նուրին նուրին եկել ա, աջքա հուրին եկել ա):³ Իսկ նարի և զրային տարերքի հետ ունեցած կապի մասին պրոֆ. Ղափանցյանը տարակուս չի հայտնում, որովհետև ազգագրական մի շարք տվյալներ գալիս են վավերացնելու այդ թեզը:

¹ Թեռդիկ, Ամենուն տարեցույցը, 1929, էջ 117:

² Պրոֆ. Գր. Ղափանցյան, Զրահարսի պաշտամունքը հայերի մոտ, ԽԳ, 1940, № 6, էջ 135:

³ Նույն տեղում, էջ 124:

Նոր-Նախիչևանի հայերի մեջ հայտնի էր զրի մեջ ապրող «Շովի» մարթ, որը «Մասնա Շոեր» վեպի մեջ մեզ հայտնի «Շովի+նարա»-ի դուլգահեռն է լինելու։¹

Մեզ թվում է, որ Նարը նախապես գորտ տոտեմի պաշտամունքը ներկայացնելով և հետագայում անտրոպոմորֆիզացիայի ենթարկվելով, անվան ծագման գծով առնչվում է «նայ» բառի հետ։ «Նայ»-ը խոնավություն, թացություն առումն ունի։ Մի բժիկարանում «նայ» տեղերա խոսքը ներկայացված է իբրև խոնավ տեղեր։² Թարգմանական գործերից մեկում ասված է. «...Եւ ճահիճը և գետը և ծովը և ամենայն խոնաւութիւն նայական շոգովն ի դիմի հարեալ»։³ Հայկացյան, Մալխասյան և Արմատական բառարաններում «Նայ»-ը նույն կերպ է բացատրված— խոնավ, գեճ, զրի, տամուկ, նամետ, կակուղ, ծով, ջուր, և այլն, համեմատելով հունարեն նա'մա— խոնավություն, իդրոս— խոնավ, բարբառային նէո՞— ջուր իմաստների և սանսկրիտերեն նույնանիշ մի քանի բառերի հետ։

«Նայ» բառը մեզ մոտ վաղուց է կորցրել իր վաղնջական նշանակությունը, ուստի և մեր մատենադիրների մեջ չի երևում։ Ալիշանը «Նայ»-ը կապում է հունական նայադների՝ գետերի ու աղբյուրների մեջ ապրող ջրահարսների հետ, վերջիններս նույնացնելով հայկական ջրերի շար ոգու՝ նհանդի հետ։⁴

Երկրագործական պաշտամունքների և հավատալիքների զարդացման շրջանում ընդհանուր խոնավությունների, ջրերի, աղբյուրների, ճահիճների տակ «Նայ»-ը պետք է որ գիտակցվեր իբրև այդ բոլորի անձնավորումը, տիրուժին։ Խոնավություն իմաստը, այսինքն «Նայ»-ը կարող էր վերածվել հատուկ անվան, ինչպես ուստական „Արա“ (=գետ) հասարակ անոնը՝ „Արինա“-ի։

Քաղհանի երգերի կրկնակները մեծ մասամբ կազմվում են «Նայ»-«Նայ»-ներից կամ «Նանայ»-ներից։⁵ Կարնո հայոց և այլոց մեջ ծանրաշարժ պարերգերին երբեմն փոխարինում են «Նայ»-«Նայ»-ներից կազմվող անընդմեջ կրկնվող երգեր։

¹ Եր. Շահպետ, Նոր-Նախիչևանը, և Նոր-Նախիչևանցիք, ԱՀ. Թ. 52—53։

² Ալիշան, Հին հավատք, Էջ 63։


³ Յովհաննու Ռոկերերանի մեկնութիւն թղթոյն Պաւոսի, հատ. Ա. 2862, Էջ 803։

⁴ Ալիշան, Հին հավատք, Էջ 63։

⁵ Երամ Ղանալանյան, Հայ շնորհանի աշխատանքի երգերը, Երևան, 1937, Էջ 143—156։

Նա՛յ, նա՛յ նա՛յ նա՛յ
 նա՛յ նա՛յ նա՛յ նա՛յ,
 նա՛յ նա՛յ նա՛յ նա՛յ,
 նա՛յ նա՛յ նա՛յ նա՛յ...

Իսկ մեզ մոտ հայտնի է, որ նախնական մագիկ պարերի ոկտիմիկ երգերը, որոնք կազմվում էին նման— ժամերով կրկընվող կրկնակներից, իմաստալից էին։ Դրանք կամ որսորդական և կամ երկրագործական ռեալ աշխատանքները դրսկորող մագիկ երկուլիթներ էին. ուր ստեղծագործված ոգուն կամ աստվածությանը օգնության կանչելու միջոցով նախապատրաստում էին տվյալ աշխատանքը։ Հայկական այս «քառյակ»-ները հետագայում միայն, երբ մարդն ստեղծագործում էր իրապես երգը, դառնում են միայն կրկնակներ այդ ստեղծագործությունների մեջ, իսպառ կորցնելով նախնական մագիկ իմաստները։



Նկ. 15. Ժարմանդ—արձաթյա գորտերի եռյակ։

Վանում «խոնճկովու-ն թրշված, խովսում եղած, խոնավացած էր նշանակում։ Ուրեմն «նայ» >խոնավ>խոնճկովովու նուրին նույնն են։ Եվ որովհետև նուրինը նարի<գորտի արձանն է, իսկ գորտն էլ խոնավովթյան— ճահճների բնակիչն ու ջրային տարերքի աստվածուհու պատյանը, մենք առայժմ ենթադրաբար նույնացնում ենք «նայ»-ը։

Հայկական միֆոլոգիայի մեջ ամուլներին զավակ տալը, հղիւթյան և մանուկների պաշտպանությունը թպղիներից, մոր պաշտպանությունն ալբերից և այլն, կապվում էին գորտի հետ։ Այդ էր պատճառը, որ մինչև 20-րդ դարի սկզբները Վանում և այլուր խիստ տարածված էին գորտաձև կանացի զարդերը հմայիլների ձևով՝ իրրե ճարմանդ, իրրե մեղալյոն, կրծքազարդ, մանյակ, զլխաղարդ և այլն։ Խոնավության բնակիչ գորտի մեջ, հավատալիքների համաձայն, ապրում էր հավերժահարսը։ «Ճանտերը» սիրը թե գորտի, կրիայի, կատվի, և առավելապես օծի կերպարանք ուներ և գիշերները՝ հավերժահարսի վերածված, տան մութ տեղերը կը տեսնվեր կիներու և երբեմն ալ կույս աղջիկներու։

Նյութական կուլտուրայի (գորտաղարդերի) մնացուկների ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ գորտի այդ ձեփի պաշտամունքը թեև ընդհանուր էր Հայաստանում, բայց այն առավելապես զարգացած էր Վասպուրականում և դեպի Տիգրիսի ու Եփրատի հովիտները ձգվող տերիտորիաներում։ Եվ դա շատ հասկանալի է, որովհետև այդ խոշոր գետերի ու Վանա լճի մեջ, ինչպես Հայտնի է, երկակայլում՝ էին ջրային նշանավոր աստվածուհիներ ու ողիներ, ինչպիսիք մեզ հայտնի են նաև Եգիպտոսում, Նեղոսի հովատում։

Նուրինի ու ջրի տպու կապի մասին խոսելիս պըռք. Գ. Ղափանցյանը մեր «Ծովի» բառը համեմատում է վրացիների «Ճալա» կամ «Ճալակի» բառերի հետ, որոնք «գետի մոտ եղած թփուտ» են նշանակում։ Սրանք էլ համեմատում է հայոց «Ճլկուտ» բառի հետ, որը համհնուա տեղ է նշանակում։


«Ճլին» էլ, ինչպես տեսանք, կապված է խոնավության, անձրևաջրով շաղախված հողի. (ցեխի) հետ։¹ Այս իմաստով էլ նայ >նար> նուրին—ճոլի նույնն են, ծագած «Նայ»-ից։ Արմատական բառարանում «Թօն»-ը կամ «Թանալք»-ը նույն թաց—թացություն կամ «Նար» առումն ունեն, որ նշանակում է, թե «Նայ»-ն ու «Նար»-ը իրապես նույնն են։ Իսկ «Թօն»-ն առանձնապես «տեղատարափ անձրևա նշանակությամբ, մեզ թույլ է տալիս մտածելու, թե արդյոք դա ինքը «Ճոլին» չէ», որովհետև մենք ունենք «Թոնճակ» բառը Ախալքալաքում այն մանկական երգի մեջ, որը երգվում էր ամպամած օրերին։

¹ b. Լալայան, Բորչալուի գավառ, Աչ, Ժ. 202:

Թո՞ն էրա,
Թոնճա՞կ էրա,
Գարի-ցորեն
Թո՞լ էրա:¹

Թոն—թոնճակ— խոնավություն նույնն է, թե զոլի—ճահիճ—
խոնավություն: Եթե այդ այդպես է, ուրեմն «Ճոլի» հասարակ բառը
հետագա հատուկ անուն «Ճոլի»-ի հիմքն է, իսկ վերջինս՝ խոնա-
վության աստվածուհի նարի մի այլ ձևը:

Ճահիճները սովորաբար գորտերի բնակավայրեր են համար-
ված, որպիսի իրական հանգամանքի շուրջն էլ հյուավել են ա-
ղերսակցվող հավատալիքները: Այստեղ մամուարույսերը ժողո-
վըրդական-նախնական մտածողության մեջ գիտակցվել են իբրև
այդ գորտերի գահերը, տները, գորտնտում, գորտնբուրդ,



Նկ. 10. Շահատաղարդ—զլխազարդ: գորտ հմայիլով:

գորտնխալի, գորտնգորգ, գորտնուկխոտ ձևերով: Գորտերն
այստեղ այն շրահարսների պատյաններն են, որոնց վերագրված
են տղաբերքի և անձրևաբերության զորությունները: Գորտերի
կոկոռը անձրև գալու նշան էին համարում: Զրերի պակասության
պարագայում, երբ գորտերը քշանում և կոկոռները նվազում էին,
այսինքն իրականում երբ երաշտ էր լինում, գորտերի լոռությունը
վատ նշան էր համարվում: Գորտերի հեռացումը ճահիճներից և
զրերի նվազումը, երաշտի վերահաս վտանգը վերագրվում էր այն
ոգուն, որը պատենավորված էր գորտի տպեղ արտաքինի մեջ:

¹ Ախալցխայում երգվում էր թոն էրէ, թոն-թոն էրէ, ցորեն հացը
բոլ էրէ:

Հենց այս դիցուհին է, որը նար անվամբ թաքնվում է ճահիճների և զրերի մեջ։ Այդ էր պատճառը, որ տեղ-տեղ շարշարում էին նարի՝ արձան նուրինը, տեղ-տեղ էլ հենց իրական գորտը, անձրեւ բերելու նպատակով։ Մի շարք գավառներում հայերն այդ նպատակով գորտն սպանում, մեջքին էին դնում կամ կախում էին ծառերից։ Մեգրելները և արխազները նույնպես անձրեւ հայցելիս սպասում էին գորտերին, իսկ Դաղստանի լեռնցիները գորտին դարձնում էին մեջքի վրա։ Սվանները գորտին շորերով պարուրում և հոսուն ջուրն էին սուզում։¹

Ինչպես գորտի հետ կապված հավատալիքները, նմանապես և անձրևաբեր տիկնիկները կովկասյան ժողովուրդների մեջ նման են։ Սկզբից մինչև վերջը կրոնական ծիսակատարությունները համընկնում են հայկականին, որոնք Կովկասի եղբայրական ժողովուրդների կուտուրալի պատմության մեջ նշանակալից դեր են խաղալու։



Նկ. 17. Գլխադարդ - գորտածե հմայիլով

Արխազներն ունեին «Զիվեր», չերքեզները՝ «Խանցե-գուաշե», Կաբարդիններն ու կախեթի վրացիները՝ «Լազարե»։ Նույն ունեին նաև դաղստանցիները, աջարները և մյուսները։²


¹ Г. Ф. Чурсин. Магия в борьбе с засухой у кавказских народов. Бюллетень КИАИ, № 6, 1930 г., էջ 17։

² Г. Ф. Чурсин, նույն աշխատ., էջ 17, Дж. Фрэзер. Золотая ветвь, вып. I, Москва—Лен., 1931, էջ 88, և Մելիքովթ-Բեկ, Նուրինազարեկ երգի բանալին. ԳԺ, 1941, էջ 192—193։

Մեր Զիշի-Մամայի նմանակը կարելի է համարել Հույների «Թողոլ»-ը, ուր դերակատար աղջիկը մերկ մարմնի վրա կանաչից պատրաստված «Չորեր» էր հագնում:¹ Համեմատել բելոռուսների նման սովորությունը, որը կապված էր հողի ու գարնան հետ, ուր դերակատար աղջիկը սպիտակ զգեստներ հագած, սպիտակ ձի էր նստում:²

Այնպես որ գորտի միջոցով անձրև հայցելը նույնն էր, թե խրտվիլակների կամ կենդանի դերակատար աղջիկների և այրի կանանց միջոցով անձրև հայցելը: Անկասկած, նախնական ձեզ հայերի մեջ և ուրիշների մոտ կապված էր գորտի հետ, իբրև կենդանակերպված աստվածություն, իսկ հետնագույնը կապվում է նույնի անտրոպոմորֆիզացված էության հետ:

Գորտի վրա ջուր սրսկելը կամ ջրի մեջ սուզելը, ինչպես և տիկնիկների ու աղջիկների վրա ջուր սրսկելը կամ ջրի մեջ սուզելը,



Նկ. 18. Պլատաս - գորտի շերեփու կներով:

¹ Фрэзер, Золотая ветвь, вып. I, 87.

² А. И. Яцимирский, „Ярило“—и Брокгауз и Ефрон, Энциклопедический словарь, том XL, էջ 807:

մեր կարծիքով կապված է այն նախնական ըմբռնման հետ, որի համաձայն թմրած-քնած կամ ժամանակավորապես մեռած աստվածությունը, — տվյալ դեպքում անձրես աստվածությունը, — չը միշոցով վերստին հարություն էր առնում և ստանձնում էր ոմոռացածք պաշտոնը: Այդ պատճառով էր, որ շարշարում էին նարի արձանը՝ նուրինը կամ նախնական իմաստով՝ գորտը:

Անձրեաբեր նուրինի ամենանախնական ձեզ գտնում ենք հնդիկների մեջ: Ֆրեզերի նկարագրությամբ այստեղ դոդոշները ամենուրեք համարվում էին անձրես հովանավոր հսկիչներ: Այդ պատճառով էլ երաշտի ժամանակ դոդոշների նկատմամբ նրանք շատ հոգատար էին լինում: Օրինոկո գնտի մոտերքում հնդիկները երկյուղում էին խփել դոդոշին, գտնելով, որ նրա մեջ նստած է շրի տիրուժին — աստվածուժին: Երաշտի ժամանակ նրանք դոդոշին նստեցնում էին շուռ տված ամանի տակ և վերջինիս հատակին խփում էին գավազանով (կան անձրեաբեր գավազաններ): Այմարիները պատրաստում էին ջրային կենդանիների խրտվիլակները և հավատում, թե դրանք քարձր տեղ դրվելիս անձրե կրերեն: Հնդկաստանի կենտրոնական նահանգներում գորտը պարուրում էին ճյուղերով ու տերեներով և անցնելով տնե-տուն, մեր նուրինի անձնակազմի նման երգում էին: —

«Շուտով ինձ տուր, գորտ,
Կենարար խոնավություն, թող
Շուտ հասունանան ցորենն ու
Կորեկը դաշտերում:»¹

Իսկ Մադրասում կապուները կամ ուղղիները, որոնք հողագործներ են, երբ անձրեն սկսում էր կաթկթել, կանանց միշոցով գորտը կենդանի-կենդանի կապում էին հնդկեղեգյա մաղի վրա: Վերջինս ծածկում էին տերեներով և այդպես անցնելով բոլոր տները, երգում էին.

«Տիրուժի, գորտը լողանալ է ուզում.
Ո՞հ, անձրես աստված, թեկուզ մի քիչ չուր
տուր նրա համար»:

Երգի ժամանակ տանտիրուժիներն ամաններով ջուրը լցնում են գորտի վրա, հավատալով, որ դրանով հորդ անձրե կգա:»² Այս

¹ Փ թ զ ը ը ը, Золотая ветвь, вып. I, 92.

² Նույն աեղում:

իրական փաստերի առկայության պայմաններում մենք կասկած չունենք, որ գորտի պատյանի մեջ թաքնված է խոնավության դիցուհին, որին հեքիաթներում հուրի-փերի են անվանում (=արաբերենում՝ սևաշյա գեղեցկուհի): Սխալ կլինի համեմատել մեր «Նուրին»-ը Նարի մակդիր «աշքահուրիխ»-ն, որը Մ. Աբեղյանի բացատրությամբ հրաշալի հավերժահարս է նշանակում: Այս առումով էլ հանգուցյալ գիտնականի այն կարծիքը, թե մեր Նուրինը Աստղիկ-դերկատոյի պատկերն է, մենք շենք բաժանում: Նար-Նուրինը Աստղիկ դիցուհուն պաշտոնով նման է, բայց նույնը չէ: Ինչպես երևում է, «Ասսնա Շոեր» էպոսի Շովինարը (Շովի+նար) նույնպես ջրային տարերքի աստվածուհի Նարից կամ «Հուրի-Փերի»-ից է ծագում: Երկրագործության և մարդկային պտղաբերության այս նոր աստվածուհուն հետագայում միայն փոխարինել են դրսից անվանապես մտած աստվածուհիների անունները (Անահիտ, Աստղիկ):

Նարի ամբողջական անունը պահպանված է քրդերի (Եղինեցի) մի ժողովրդական պոեմի մեջ, որը գրի է առել ազգագրագետ Ամինե Ավդալը:

Բնավշա Նարինը Նար է,
Աշքերն ու ունքերը վարդ գարուն է.
Ես՝ Բնավշաս Նարինին փախցնեմ,
Գիշեր-ցերեկ ինձ հետ ման ածեմ:²

Նար աստվածության կոսմոգոնիական բնույթ ենք տեսնում նրա վարիանտներից մեկի՝ Նազ-խաթունի մեջ, որը հանդես է գալիս Ախալքալաքի Փոքր Խանչալի գյուղի մանկական-անձրևային երգի սյուժեում:

Ամպը գոռաց,
Մուկը ճուաց,
Նազ խաթունը
Վարտիքն առավ
Դուա թռավէ³

¹ Պրոֆ. գ-ր Մ. Աբեղյան, «Վիշապներ», ..., էջ 91:

² Թարգմանությունը կատարել է ընկեր Վ. Պետոյանը:

³ Համեմատել հետեւյալ երգը.

— Լազլագո, հաճի բեգո,
Հուստմ կիդաս.
— Մե Նարերուց:

Առաջին անգամ լսվող որոտի հետ կապված այս երգի մի այլ վարիանտի մեջ՝ Նաղ-խաթունը Ախալցխայում հայտնի է Շարս-խաթունու կամ Շարս-խանում» ձեռվ, որտեղ ասում են՝

«Ամպը գոռաց,
Մուկը ճըռոաց,
Հարս-խանումը
Դուռը մնաց»:

Երկու գեղքումն էլ բովանդակությունը գրեթե նույնն է, ուր անհրեա է Նարի («Նախապես տնային հոգի-փերիի— գորտի մեջ պարփակված աստվածունու») գարնանային դարթոնքը (համեմատել Ակլատիզը, որը նույնպես արթնանում և երկինք է բարձրանում թոշունի ձեռվ):

Նաղ-խաթունի՝ Նար-խաթունի տնից դուրս թոշելը կապվելով աստեղային կրոնի երկրագործական բնույթի հետ, նույնանում է լոռու, Շուլավերի, Ռազախի և Վաղարշապատի «Ծովինարի» կամ «Ճուղիալք-ի հետ, որոնք կայծակ-փայլակ են նշանակում»:

Ակադ. Մ. Աբեղյանը գտնում էր, որ «Ծովյան» կամ «Ճուղինար» բառը, կազմված «Ճով» արմատից, իբրև «Ճովի» սերունդ, ծովային», անշուշտ սկզբնապես փայլակ ու կայծակի աստծու մի մակդիրն է եղել և հետո, ինչպես հաճախ լինում է առասպելաբանության մեջ, առանձնացած գործ է ածվում իբրև հատուկ, այլև իբրև հասարակ անուն, կայծակ և փայլակ նշանակությամբ»:¹

Հենվելով նոր փաստերի վրա, մենք հակառակն ենք գտնում: Փայլակ-կայծակի Ծովի+Նար կամ ծով+յան առումը նախապես Նարի անվան անցումն է, վերջինիս հարմարեցումը աստեղային կրոնին հատուկ ձևերով, ինչպես տեսնում ենք Հին Աշխարհի ժողովուրդների մեջ: Ոչ թե մակդիրը մի այլ աստվածության, այլ իսկական անունը, իբրև այդպիսի աստվածության:

— Ի՞նչ ես բերեք,
— Թուղթ մը սապոնտ
— Ա՞ւր կը տանես,
— Առակա Մամուն:
— Որ ի՞նչ անի,
— Լաշիկ լվա,
 թալի զլիուն,
 Ենե գարուն:

(Տես Գ. Արվանձոյան, Համով-հոտով, Թիֆլիս, 1904 թ., էջ 350):

¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղպատ, 1899 թ.:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հողաբերքի հետ կապված հայկական հավատալիքների հիմքը երկրագործական զբաղմունքների հնամենիության արդյունք է Հայաստանում:

2. Հողաբերքի պաշտամունքներում պտղաբերության նար աստվածուհին գորտ տոտեմի պաշտամունքի հետագա զարգացումն է, որը լիապես համապատասխանում է մայրիշխանական էտապի հասարակական կառուցվածքին՝ Հայաստանում:

3. Մենող և հարություն առնող բնության հին աստվածություն Ակլատիզը նար աստվածուհու հետագա զարգացումն է հայրիշխանական տոհմացեղային շրջանում:

4. Եատ հավանական է, որ մեր Արա Դեղեցկի պաշտամունքը Ակլատիզի նման պաշտաման վերասերումը լինելը Հայաստանում, բարձր դասակարգային հասարակության պայմանների մեջ:

5. Նարի և Ակլատիզի պաշտամունքի խիստ ընդգծված ընդհանրությունը հայկական բոլոր գավառներում ցուց է տալիս, որ դրանք առանձին ցեղային պաշտամունքներ լինելուց դադարել են դեռևս հայ ժողովրդի կազմավորման սկզբնական շրջաններում:

ՎԱՐԴ ԲԴՅԱՆ

НЕКОТОРЫЕ ПЕРЕЖИТКИ ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКОГО
КУЛЬТА У АРМЯН

РЕЗЮМЕ

1. У древних армян особое место занимал культа весны, возрождающей спящий мир к жизни. Верховным божеством природы, ежегодно умирающей и воскресающей, являлся олицетворяющий весну и покровительствующий плодородию Ара Прекрасный. Ара был наделен качествами, соответствующими высшим слоям общества.

Этнографические материалы и археологические данные показывают, что все функции Ара Прекрасного, за исключением лишь функций военного характера, имели в предшествовавшей стадии другое божество и лишь впослед-

ствии оно подверглось именному изменению. Это предшествующее божество изначально было женского пола, но со временем, изменив свой пол, изменило и имя. Это женское божество известно под именем Нар. Божеством же, связывающим Нар с Ара Прекрасным, являлся Аклатиз (рис. i2).

Несмотря на многообразие наименований Аклатиза, функции этого божества в пережитках его культа вплоть до конца 19-го века были одинаковыми во всех районах Армении. Таким образом, в Армении божество весеннего пробуждения имело своими образами Нар-Аклатиза—Ару Прекрасного. Богатые этнографические материалы показывают, что божество Нар имело безобразную внешность лягушки, но вместе с тем славилось своей красотой.

2. Как подтверждают данные археологии, Армения была одной из стран древнейшего земледелия. Широким распространением земледелия и объясняется наличие в Армении не только культа весны, но и культа самой земли. По данным армянской мифологии, земля наделялась женскими качествами и считалась матерью. Она вселяла героизм в человека, о чем свидетельствуют письменные предания раннего средневековья.

3. В период весенних земледельческих работ имели место ряд земледельческих праздников, в которых выражалось обожествление „владык земли“—духов и растительных божеств, причем все это представлялось опосредованно, через христианскую религию.

4. Значительное место в культе весны, земли и плодородия занимало почитание звезд. Целый ряд звездных групп своими наименованиями связывается с земледельческими орудиями. Эти наименования ясно указывают на благоприятный и неблагоприятный характер времен года, климата, разлива рек.

5. С культом весны и земли неразрывно связан культ воды. Крупные реки и озера Армении в древности считались обиталищами таких божеств, как Нар (сравни Цовинар), богиня Астгик и др. По армянским источникам, вода является братом сестры-огня и представляется источником как добрых, так и злых сил.

Культ воды связан с космогоническими представлениями, в которых языческое божество Ваагн ведет жестокую борьбу против злых сил—вишапов.

Космогонические представления и верования совпадают с той ступенью развития производительных сил, когда „астрономия уже из-за времен года абсолютно необходима для пастушеских и земледельческих народов“.¹

6. Большой интерес представляет борьба человека с засухой при помощи магических средств. Эти средства многочисленны и многообразны: известно, например, вспахивание плугом при помощи женщин высохшего русла реки, средство, которое должно было привлечь внимание дожденоносных сил. Известно также окропление водой священных камней, статуй вишапов и священных животных и др., среди которых особенно выдается дожденоносное чучело женского пола по имени Нурин. Этому имени равнозначны имена Най, Нар, как слова, обозначающие „сырость“ и которые, повидимому, происходят от „най“ (Най—Нар—Нурин).

7. На основании дошедших до нас материалов и остатков материальной культуры можно сделать следующие выводы:

а) Армянские верования, связанные с урожаем, являются доказательством того, что земледелие в Армении существует с древнейших времен.

б) Богиня плодородия Нар является дальнейшим развитием тотема лягушки.

в) Аклатиз, бог умирающей и воскресающей природы, представляет дальнейшее развитие богини Нар.

г) Культ Ара Прекрасного выступает как возрождение Аклатиза в Армении в условиях более развитого общества.

д) Общность культов Нара и Аклатиза во всех районах Армении показывает, что они перестали быть культурами отдельных родов еще в начальный период образования армянского народа (VI-II вв. д. н. э.).

¹ Ф. Энгельс, Диалектика природы. Москва, 1932 г., стр. 39.

е) Подчеркнутая связь древних армянских преданий с природной средой исторической Армении является доказательством того, что армянский народ возник, вырос и сформировался в своей же родной стране Армении, и легенда индоевропейцев о том, что армянский народ мигрировал из других стран, не имеет под собой реальной почвы.

